


ԻՆՉՊԵՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Գ Ր Ե Ց

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

(Շարունակութիւն նախորդ քիւէն)



Ուրարտական կարաս, է. դար, Ն. Բ.

ԴԵՊԻ ԴՈՒԻՆ

Դուինի աւերակներուն միակ եւ լաւագոյն մասնադէտը դիտնական Կարոյ Ղաֆազարեանն է եւ ինծի հայրենակից: Նա սիրով Պ. Յ. Բիւրտեանն ու զիս առաջնորդեց այցելել այդ մեր միջնադարեան անուանի եւ դժբախտ քաղաքը:

Երեւանի ձգախէժի գործատուներուն քովէն մենք ճամբայ առինք դէպի հարաւարեւմուտք: Երբեմն կանաչ բիծերով, երբեմն ամայի դաշտերու մէջէն մօտեցանք ու մօտեցանք Արարատին, կար-


ծես մատներով պիտի դպչէինք, չըթնէրով պիտի համբուրէինք:

Բայց Արարատը Եասախ էր (արդիւ-ուած), Թուրքին կողմէն էր: Շուրջ 65 միլոն կտրեցինք Դուին հասնելու համար: Քիչ անդին սահմանամերձ փակ դօտի էր, եւ ուստի պահակներ կը չըլէին. բարեբախտաբար Դուինն ալ չըթայի չէին զարկած: Բարձրացանք հողէ բլուրի մը վրայ:

— Այս է Դուինի բերդը, ըսաւ Պ. Ղաֆազարեան. իր կազմուածքով շատ նման Կարմիր բլուրին: Աչքերնիս դիտակի պէս չորս կողմ դարձուցինք. այդեւէտ Դուինի դաշտն էր, հեռուն Արաքսը՝ որ դրկած կը համբուրէր Սոր վիրապը եւ անյայտացած Արտաշատին վրայ կ'ողբար: Արարատը ամենապայծառ էր. կարծես Աստուած բուռ բուռ անոր դազաթին ադամանդներ թափած էր: Աչքով կը տեսնուէին լանջերը, ամայի ինչպէս ստեղծման օրերուն: Թուրքերը չեն մօտենար անոր. կեաւուրի լեռ է. եւ գիտեն թէ բընութիւնն ու դարեր հայ ազգին տուած են աշխարհիս հրաշալիքներէն մին, եւ ոչ մէկ բռնաւոր դաշինք զայն կրնայ մեղմէ յափըշտակել:

Սոսրով Կոտակ (337-342) Դուինի հիմերը դրաւ, եւ միջին դարը զայն մայրաքաղաք ըրաւ՝ ծերացած Արտաշատին տեղ. արարները խեցին եւ էմիրութեան կեդրոն ըրին. յետոյ երկրաշարժը կործանեց:

Դուինի բերդը հողաբլուր էր: Պեղումներով բացեր են անոր կողերը, ներքին



Դուինի աւերակները

արահետները, ջրհորները եւ ամբարանոցները: Զրհօրներու մէջէն Պ. Ղաֆազարեան, հակառակ իր մարմնի վիճակին, վար սողացեր եւ հաներ է շատ թանկազին ոսկեղէններ, ապարանջան, օղ, մանեակ: Ո՛վ դիտէ, ի՜նչ խուճապով բընակիչներն հեռացեր են երկրի սասանումէն՝ ամէն բան լքելով: Նկարուած բազմաթիւ փայլուն խեցիներ դտեր են, որոնք գեղեցիկ նմոյշներ են Ժ-ԺԱ դարերու մեր կաւագործութեան:

Անշուշտ չունին յունական կամ ետրուրական դասական նկարչութիւն, բայց աւելի դրաւիչ ներկուած են:

Բերդին շրջապատը ժամանակին ունէր իր խոր ջրանցքի մը օղակը, այժմ պարապ է: Պարզ բլուր մ'է, հողէ շինուած, չկան քարէ պարիսպներ. արարները քար չէին սիրեր, իրենք այս հողէ բլուրը բարձրացուցեր են, ինչպէս տեսած էին իրենց անապատին մէջ:

Բերդին ոտքերուն՝ դէպի Արարատ կը տարածուէր քաղաքը. ահա շուրջ 35 մեդր երկայն, եւ 20 մեդր լայն մայր եկեղեցիին յատակը: Գաղափար չունինք եկեղեցիին ճարտարապետութեան մասին, բայց հսկայ խոյաններ, կիսատ սիւններ ցոյց կու տան թէ փառաւոր էր եւ արժանի հոն գումարելու իր համբաւաւոր ժողովը:

Հոս ալ առժամանակեայ թանգարան մը

բացուած է, նորագիւտ հնութիւններն հաւաքելու համար: Փորձութիւն ունեցայ պնակ մը փախցնելու. բայց հարկ չեղաւ. Պ. Ղաֆազարեանի շնորհիւ՝ Հայաստանի պետութիւնը պնակ մը նուիրեց Վենետիկի Միսիթարեան թանգարանին:

Չեմ գիտեր քանի անգամ բարձրացայ բերդին վրայ, չեմ գիտեր քանի անգամ նայեցայ այդեւէտ Դուինի դաշտին, Սոր վիրապին, Արաքսին, ու հեռուն անշարժ եւ յաւիտենական Մասիսին՝ որ կը հսկէ Հայաստանի վրայ, ամէն կողմէն տեսանելի, ամէնուն սրտին մօտ եւ սիրելի:

ԵՐԵՎԱՆԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

Եթէ Կոմիտասեան այգիին մէջ թաղուած քանի մը բանաստեղծներու շիրիմները քիչ կը խօսին այցելողի սրտին, եւ ունայն տեղ Հայկական Պանթէոն կոչուած են, անպայման մտերիմ տպաւորութիւն կը գործէ՝ երբ էջմիածին գիւղին մէջ, Գէորգեան ճամարանէն քիչ հեռու, կողմնակի նեղ ու հողուտ ճանապարհի մը վրայ ներս մտնես աղքատիկ դռնէ մը:

Յովհաննէս Յովհաննէսեանի բնակարանն է, տուն-թանգարանը, ինչպէս կը կոչեն: Միայնակ, փայտաշէն, փայտէ սիւներով, ցած կտուրով, առջեւ փոքրիկ պարտէզ մը, աղբիւր մը, արձանիկ մը վրան. քանի մը վարդեր, բարտիններ՝

տունէն երկու անգամ բարձր, եւ այս ամէնը չըջանալուած հողակերտ ցանկապատով:

Իր համեստ արտաքինով՝ մտերմութիւն մ'ունէր այդ տունը, ուր տարիներով ապրած ու դրած է բանաստեղծ Յովհաննէսեան: Ոչ մէկ արձանագրութիւն կայ. այնպէս մնացած՝ ինչպէս ձգած է Յովհաննէս, դեռ կարծես իր շուքը կայ ծառերուն մէջ, աղբիւրին մօտ:

Հալէպցի բարեկամներու հետ զիս հոն առաջնորդեց Յովհաննէսեանի փեսան, ինքն ալ բաւական տարեց, բայց հողիով կապուած այդ տանը, հոն չայ խմած է, խնձոք կատարած է, եւ թերեւս առաջին անգամ լսած՝ երբ բանաստեղծը իր երգերը կը յօրինէր ու ընտանեկան փորձի կ'ենթարկէր:

Յովհաննէսեանի աշխատանոցը նոյնպէս մնացած էր. պատերէն գորգեր կախուած, իր դրասեղանը, լուսանկարներ, գրիչն ու կաղամարը, քանի մը բարձեր առդին անդին, արեւելեան ճաշակով դարդարուած, փոքրիկ փաշայի մը դարպասին կը նմանէր:

Տան մուտքին վրայ դրուած էր բարձր սեղան մը, վրան կար խոշոր տետրակ մը, ուր Շիրազ քանի մը տողեր գրած էր, գրած էին նաեւ ուրիշ բանաստեղծներ, ինչ որ իրենց սիրտն այդ վայրկեանին թելադրած էր. քանի մը տողեր եւ ալ գրեցի, չեմ գիտեր ինչ գրեցի. բայց կը մնայ, կը կարդան. հեռու աշխարհէ եկողի մը ձայնն է. Յովհաննէսեան արժանի է մեր սրտագին խօսքերուն:

Մենք զիտեցինք միւս սենեակներն ալ. յիշատակի առարկաներով պահպանուած, հոն կը տիրէր մաքուր աղքատութիւն, փայտաշէն էր ամէն բան, համեստ եւ շատ մտերիմ:

Դռնէն դուրս փողիկից ճամբան կայ, ամառուան տօթը, չըջալայ հողածածկ տուններ, որոնց մէջ Յովհաննէս Յովհաննէսեանի տունը հոգեկան ուխտիս մ'էր:

* * *

Երեւանի Արուսեան փողոցէն բաւական լայն ճամբայ մը կը շէղի դէպի չըջալայ բլրակները եւ կանգ կ'առնէ բարձրագիւր տան մը դիմաց. Յովհաննէս թումանեանի փողոցն է, եւ դիմացն իր տուն-թանգարանը: Երեք կամարով մուտքը կը նայի դէպի ճանապարհը եւ հեռուէն դիտողին թանգարանի տպաւորութիւն կու տայ:

Սանդուղներէն բարձրացայ, մինակ էի, մէկ երկու շնորհալի օրիորդներ ընդառաջ եկան.

— Ուղում էք թանգարանը տեսնել, համեցէք, ինձ ըսին:

— Դուք արտասահմանի՞ց էք, հարցուց ուրիշ մը:

— Այո՛, Իտալիայէն եկած եմ. Վենետիկ քաղաքէն:

— Բա՛, Վենետիկից, ինչ լաւ քաղաքից էք, բացականչեց օրիորդ մը: Ճանաչո՞ւմ էք Միխիթարեաններին:

— Է՛հ, մի քիչ ճանաչում եմ, պատասխանեցի ես:

Սենեակ սենեակի մէջ՝ շարուած էին մեծ բանաստեղծին յիշատակները, ընտանեկան լուսանկարները, իր գրքերու դանդաճ հրատարակութիւնները, չքանչաւներ, մետաղներ, գրիչ ու կաղամար:

Խնամքով կարգաւորուած, բայց չունէր Յովհաննէսեանի տան մտերմութիւնը. թումանեանի թիֆլիզ ապրած է, իր տունն ու Վերնատունը հոն մնացեր են, եւ չեմ կարծեր թէ Վրացիները գէթ տան վրայ յիշատակի քար մը դրած ըլլան. երկրորդական փողոց մը իր անունը կը կրէր, բայց Ծերեթելիի քով արձան չունէր, եւ չիրիմը լքուած էր:

Թումանեանի տուն-թանգարանին մէջ ամէնէն հետաքրքրականը իր պառաւ աղջիկն ու երեք անգամ պառաւ կիներն էին: Յովհաննէսի տան թերափները, որոնք շատ քիչերու կը տեսնուին, բայց լաւագոյն յիշատակները կը պահէն «Ամենայն Հայոց բանաստեղծ»էն:

Սրտագին տպաւորութեամբ դուրս ելայ թանգարանէն. գեղեցիկ մտածութիւն էր այդ մեծ բանաստեղծին նուիրել թան-

դարան մը, որ ունենար իր մտերիմ կեանքին յիշատակներն ու տուն կոչուէր, հոն խնդումներն երազելու համար թումանեանը՝ Երեւանի խնձոքներու թամազան:

* * *

Չեմ գիտեր թէ քանի անգամներ բարձրացած եմ Արուսեանի պողոտայէն, մեկնելով Լենինի հրապարակէն. նախ քիչ մը հին մնացած, եղբայրներուն երբեմն նորաչէն պալատներ, երբեմն հին պարսկական հողէ տուններ, բայց երբ կը հասնի Տէրեանի փողոցին՝ կը լայնայ, կը գեղեցկանայ հասնելով տարաբախտ վիպասանի արձանին ոտքը, որ կանգնած՝ ձեռքերը կուրծքին խաչածեւ, կը նայի Երեւանին: Իր լուսթիւնը կը խանդարեն հանրակառքերը, «Թրէյդպոլսները», որոնք Նորքէն եւ Քանաքեռէն կ'իջնեն դէպի քաղաք:

Արձանի մօտէն բաւական լայն ճանապարհ մը կ'ոլորի դէպի արեւմուտք, կը բարձրանայ եւ կ'անցնի Ստալինեան պողոտային (այժմ Լենինեան) վերեւ. ոտքերու տակն է Մատենադարանը, աչքերու առջեւ՝ ամբողջ Երեւանը. կը բարձրանամ ու ստեպ կանգ կ'առնեմ, ետեւ կը դառնամ, Նորքի կողերուն տեսնելու «Աղբար»ներու միայնակ տունները, հոկտեմբերեան քիչ մը դեղնորակ պուրակներու մէջ. ցանկապատներու վրայ սպիտակ լուացք փռուած է, կնոջ մը սուր ձայնը կու գայ. մէկը կը կանչէ. անդին մանուկ մը կու լայ. իսկ վարը Օփերան հսկայ բազմած է չէնքերէն վեր, սրտերէն վեր:

Դարձեալ կը բարձրանամ. աջ կողմէս ծառերու մէջէն Ստալինի հսկայ արձանը դեռ աւելի կը մօտենայ, կը տեսնուին իր հաստ պէխերը, լայն աչքերը, ամպոտ յօնքերը եւ եղէգէ ձեռքերը: Կ'ուզէի որ ծառերը զինքը ծածկէին՝ գէթ բնութեան գեղեցկութիւնը չխանդարելու համար:

Ճամբան արմուկի ձեւով դարձաւ եւ հեռուն տեսնուեցաւ Քանաքեռը: Նորաբաց ուղին լայն է, չինութեան մէջ է. պիտի զարդարուի՝ հասնելու համար Արուսեանի մօտ, անոր սրտին վէրքը բու-

ժելու՝ այնքան երազած հայրենիքի մը սպեղանիով: Պողոտան բաւական երկար էր, բայց եւ ուխտաւորի պէս փափաքեցայ ոտքով կատարել, թերեւս ոտքերս հանդիպէին իր հետքերուն, իր չունչէն սիւք մը գար, իր ձայնը լսէի ծառերու խառնափնէրուն մէջ:

Մօտեցայ դիւղին, որ այժմ Երեւանի մաս կը կազմէ: Քարոտ դիւղ մ'է, դեռ չէ կազմուած, դեռ տուններ հին են, Խաչատուր դիւրաւ պիտի գտնէր իր տան ծուռ փողոցը:

1936ին, իր տունը, չըջապատը, գիւղը անարատ մնացեր էին. հիմա քարերը քիչ մը շարժեր են: Իր տնակին մօտ կիսանդրին, երազային նայուածքով, ուղեւորները կ'ընդունին:

Կարելի չէր ներս մտնել այն աղքատիկ եւ հողակերտ տունէն՝ ուսկից այնքան վսեմ թռիչքներ առաւ Արուսեանի հողին. ուր թերեւս ստեպ գերմանացի բարեկամ ուսուցչապետին հետ ծալապատիկ նստած՝ չայ խմեր է եւ երազած է Թագուհիին գեղեցկութիւնը եւ Աղասին քաջութիւնը: Այդ գիւղացնակ տունը հիմա մասնաւոր ծածքի տակ առնուած է, տեպակ մը սրբազան խորան՝ որուն պէտք է նայիլ եւ ոչ մօտենալ:

Անոր մօտ միայնակ չէնքի մը մէջ, որ չունի Արուսեանի ոսկի երազները, վիպասանին թանգարանն է. ունի առանձին պաշտօնէութիւն, այցելուներու համար ստորագրութեան տետրակ:

Պատերը ծեփուած են նկարներով, հինէն ու նորէն հաւաքուած հրատարակութիւններով՝ Խաչատուրին նամակները, Դորպատի յիշատակները, բարեկամներու լուսանկարները: Հաւաքուած, դասաւորուած՝ այն ինչ որ մօտէն հեռուէն կը խօսի Խաչատուրի մասին:

Այցելուին վրայ երկիւղած աղղեցութիւն կ'ընէ. չեմ գիտեր ինչո՞ւ. թերեւս Արուսեանի դժբախտ կեանքն ու եղբրական վախճանն է պատճառը, թերեւս Վէրք Հայաստանի սրտազրաւ ընթերցումը, հէգ Թագուհիին աղէխարչ ճիչերը, կամ

Աղասիի հերոսական կանչերը կու գան ու զխողի սրտին տակ կ'արձագանդեն:

Ո՛րքան փափաքելի էր որ այդ աղքատ չէնք մեծնար, մեծնար Ունիվերսալի չափ ըլլար, վարդազոյն քարերով ըլլար, եւ հոն որմերէն կախուած տեսնուէին զեղարուեստական հանձարով նկարուած վէրք Հայաստանի զանազան գրուազները եւ այցելուն կարգար, աչքերով կարգար, սրտով հետեւէր Արովեանի եւ Հայաստանի ամենազեղեցիկ զիւցազնավէպին:

Դժբախտաբար ինձ չկրցաւ ընկերել Արովեանի կեանքին ու գործերուն ամէնէն որակաւոր մասնագէտը՝ Բենոյ Յակոբեան, իմ համշիրակս. բայց նա թանկագին ծառայութիւն մատուցեց է մեր գրականութեան, փարատելով բազմաթիւ տարակոյսներ եւ կրցեր է հաստատել թէ դժբախտ իմացաւորը զոհ գացեր է բարբարոս թաթարի մը դանակին:

Կրկին անգամ շրջելով Արովեանի տան շրջապատը, շօշափելով քարերը, բռնեցի ծուռ արահետը. վերադարձս տրտում էր, կարծես սիրտս հոն մնաց. աղքատ տնակի մը մէջ, հարուստ հոգիի մը քով, եւ անկամայ, բնական մղումով շրթներս մըրմընջեցին:

«Հայաստանի վերքի երգիչ,

լուսապայծառ Արովեան»:

Դարձեալ ոտքով վար իջայ, անգամ մ'ալ զիտելու Երեւանը, Արովեանի տեղ, Արովեանի սրտով, փռուած Արարատի գրկին մէջ, Թագուհիի զեղեցկութեամբ եւ նոր օրերու ուրախութեամբ:

ՀԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍ

Հին դարերէ ի վեր հայ ժողովուրդը նկատուած է աշխատասէր, ընդունակ արհեստներու մէջ եւ կենսունակ արեւու ամէն շրջանին: Նոյն հոգին եւ նկարագիրը պահած է այսօր ալ. գնա Սիւրիա, հոն զինքը Արեւելքի զերմանացին պիտի կոչեն, արիւնտ Տէր Զօրը արգաւանդ դաշտերու վերածեր են, Հալէպը պալատներով զարդարեր:

Անցիր Լիբանան, Պարսկաստան, Եգիպտոս, զաղթական հայը եղած է գործատուներու տէր, մերկ եւ հալածական հայը օտարներուն ձեռք չէ կարկառած: Նոյնն է Եւրոպայի կամ Ամերիկաներու մէջ եւ նոյնն է առաւելագոյն չափով Հայաստանի մէջ: Պետութիւն եւ ժողովուրդ ձեռք ձեռքի՝ բարձրացուցեր են հարիւրաւոր գործատուներ: Հրաշագործակնիքն Հայկին, հարստութիւն եւ հաւնաբ, պիտի ըսէր Ալիշան՝ կերտեր է իր մայրաքաղաքը, իր Լենինականը, Կիրովականը, հարիւրաւոր նոր եւ զեղեցիկ աւաններ: Կարմիր չեչաքարէ տուներ խաչխաչի նման բացուեր են երկրին ամէն կողմը: Երեւանը իր ծխաններով խիտ անտառի կը նմանի: Հայաստանի թոքերն են որ կը շնչեն՝ արտադրելով ամէն տեսակ ապրանք:

Բարձրացիր Նորքի վրայ, ծուխ եւ ծրխան. անցիր Քանաքեռ, աչք կտրելու չափ հեռուն՝ դարձեալ գործատուներ. եւ տակաւին ծրագիրներ ունին նորերը շարելու եղածներուն մօտ: Այս մարզին մէջ եղած յառաջդիմութիւնը ուղղակի հրաշք է եւ ամէն գնահատանքէ վեր. հայ ժողովուրդը իր հին կորովը կրկին ցոյց տուած է, ինչպէս Անիի մէջ, կերտելու իր եւ զաւակներուն փառաւոր հայրենիք մը:

Ընթերցողը պիտի ըսէ՝ թէ ամէն կողմ մարդիկ՝ արագ կամ դանդաղ քայլերով՝ առաջ գացեր են. ճիշտ է, յառաջդիմութիւնը հայերուն մենաշնորհն է, սակայն երբ նկատի առնենք Ստալին-Պերիայի սարսափի տարիները, երբ նկատենք վերջին պատերազմին տասը տարուան փոթորիկը՝ որ անցաւ մեր փոքրիկ երկրին վերայէն ալ, պէտք է ըսենք թէ տասը տարի հազիւ ժամանակ ունեցեր են աշխատանքի եւ աշխատանքը արմուկ արմուկի եղած է: 1936ին Երեւանը հին տուներու զերեզմանոց մ'էր. 1960ի Երեւանը նոր Անի մ'է:

Աւելորդ է մէկիկ մէկիկ անուանել անոր գործատուները, ձգախէժի, ժամացոյցի, ճշտութեան գործիքներու, քոնեաքի կամ զինիի: Ամէն քայլափոխի կարե-

լի է մեծ կամ փոքր աշխատանոցի հանգիստի եւ կ'աշխատին մեղուաջան, բանուոր բանուորուհի, գիտնական եւ պաշտօնեայ, պետական խնձ կամ ճարտարագէտ, բժիշկ եւ զբաղէտ, հազար բազուկ մէկ սիրտ, հազար ուղիներ մէկ նպատակ՝ հայրենիքը վերականգնել: Ես չեմ տեսած Կիրովական կամ Լենինական, զիտեմ մէկուն անուանի Կոմպիւտը, միւսին մանարանները. զիտեմ թէ Զանգեզուրի եւ Ալլահվերտիի մէջ պղնձի հանքերը անընդհատ կ'արտադրեն եւ ոսկիի նոր հանքեր երեւան հանք են, թէ կրաքարերէն կը փորձեն թել հանել եւ միջազգային հրապարակ ելեր են անոր ելեկտրական մղիչները:

Հայաստանի ճարտարարուեստին ամէնէն աւելի զարկ տուին ներգաղթող բանուորներ, արհեստաւորները, աղքատները, ինչպէս զիրենք կը կոչեն: Կովկասահայր արհեստի մէջ քաջ չէ, նոր սկսեր է ճամբայ ելլել: Ամէնէն մասնագիտական արհեստները աղբարներուն ձեռքն է, որոնք աշխարհիս ամէն կողմէն եկած, բերած են նաեւ այդ երկիրներուն զարգացումն ու արհեստը: Թերեւս գտնուին անոնց մէջն ալ, մանաւանդ կիներ, որոնք Աթէնք կամ Փարիզ երազեն, դժգոհութեան նշաններ տան. սակայն պետութիւնը աւելի հոգ կը տանի իրենց տուն տեղ եւ փոքրիկ այգի


մը ջանալով տալ՝ քան տեղացիներուն:

Մոսկուա լաւ գիտէ հայուն ընդունակութիւնները եւ տրամադիր է տակաւին նոր գործատուներ բանալ մեր երկրին մէջ: Անցան ստալինեան ժամանակները՝ որ մօտակայ ազգեր հայ քրտինքով իրենց հացը շաղուեն, աղքատ ձգելով Հայաստանը:

Վստահ եմ թէ այդ քարոտ երկիրը՝ որ յամառօրէն դէմ կը դնէ մշակի բազուկներուն, օր մը պիտի դառնայ նոր Պելճիքա մը, յամառօրէն աշխատող իր մտացի եւ արդիւնաւէտ զաւակներուն ձեռքով:

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻ

Արտասահմանի հայութիւնը մտահոգ եւ կասկածաւոր զիրք բռնած է այս հարցի մասին: Հայ սիրտն այրած է, տեսնելով իր զաւակները որ կամաց կամաց կը հեռանան հայութենէն, կը մոռնան մայրենի լեզուն, չեն կարդար հայ գիրքն ու թերթը, զբաղած են օտար հարցերով: Այսօր հայութեան կեդրոն այդ փոքրիկ Հայաստանը, մեր ազգային միջնաբերդը, մեր պատմութեան նուիրական օրօրանն է: Պէ՞տք է կասկածիլ անոր ազգային ըզգացումներուն վրայ, լեզուին վրայ, ապա գոյութեան վրայ:



Դուինի մայր եկեղեցւոյ խոյակի մը

Համայնավարներն, ըստ իրենց միջադրության վարդապետութեան, ազգային հարցերով չեն զբաղիր: Եղաւ ժամանակ մը որ Ստալին եւ Պերիա, պաշտելով հանդերձ իրենց Վրաստանը, խիստ հաւանքի ենթարկեցին մեր գրողները եւ երիտասարդները: Չեմ կարծեր թէ Մոսկոյա ընդունին հրաժարած ըլլայ համայն Ռուսիոյ մէջ ապրող խայտաբղետ ցեղերը մէկ լեզուի եւ մէկ ազգութեան վերածելու դադարաւն, ինչպէս էր Չարերու ատեն: Սովետական աշխարհի մէջ ուսերէնի պարտադրիչ ուսումը՝ քիչ մը այդ նպատակը կը հետապնդէ:

Ըստ ինծի, դժուար է որ յաջողի իր ծրագրին մէջ, մանաւանդ որ ցեղային խմբաւորումները, ներքին պետականութիւնը եւ բազմաթիւ ցեղերու դարաւոր աւանդութիւնը դիւրին չէ բեկանել:

Ինծի ծանօթ չեն թէ ի՞նչ է դրութիւնը Ուրաղներու, Իւզպէքներու կամ Լիթուանացիներու երկիրներուն մէջ. բայց մենք Հայերս ի բնէ քիչ մը միջազգայնական եղած ենք. մեր տան մէջ, մեր հողին վրայ հաճոյքով օտար լեզու կը խօսինք, կարծես մեր հարուստ բարբառը գոհունակութիւն չի տար, կարող չէ մեր հողեկան ու մտերիմ զգացումները բացատրել. մեզ շուտով կը հրապուրեն օտար գրականութիւն, պատմութիւն եւ կենցաղ: Հպարտ ենք մեր անցեալով, բայց ոչ նախանձախնդիր:

Կովկասի մէջ ես տեսայ Վրաստանը, իր ժողովուրդը, հանդիպեցայ վրացիներու, քիչ թէ շատ չօշափեցի իրենց ազգային երակը: Թիֆլիզի մէջ կրնամ հաստատել թէ ուսերէն բնաւ չլսեցի փողոցները, գրեթէ չկային ուսերէն ցուցատախտակներ. մինչ Երեւանի մէջ կարելի է ըսել երեսուն առ հարիւր ուսերէն կը խօսին. կան գործատուներ (օր. ճշտութեան գործիքներու) ուր ամէն ինչ ուսերէն է, ազգ եւ ազինք, գրութիւն եւ հրահանգ: Կան գոյտ ուսերէն լեզուով թատրոն, շարժանկար: Հեռաւեժները աւելի ուսերէն է՝ քան հայերէն: Անշուշտ ցաւալի երեւոյթներ են, եւ անհոգութիւն ազգային ար-

ժէքներու հանդէպ, տեսակ մը հայկական ունակութիւն:

Կարելի՞ է հետեցնել թէ ներկայ սերունդը դէպի ուժացում կ'երթայ. ո՛չ, վտանգը մահացու չէ: Ես խօսեցայ շատ երիտասարդներու հետ, անոնց սիրտը թունդ հայ է. չեն արտայայտուիր, բայց հարկի պարագային, միջազգային մրցումներու, թատրոնի եւ այլ հանդէսներու ատեն իրենց հայ հողին կը ճառագայթէ:

Ամէնէն աւելի Երեւանը բռնուած է օտարասիրութեան ախտէն. չեմ կարծեր թէ Լենինական կամ Կիրովական եւ այլ կեդրոնները վարակուած ըլլան ուսական դեղին ցաւէն:

Գիւղերը, որոնք գրեթէ մէկ միլիոն հայութիւն կը հաշուեն, ընդունին ազգային հողի ունին. ո՞վ կրնայ օտարացնել Արագածի Մշեցիները, կամ ներգաղթողները. եւ բարեբախտաբար Հայաստանի դիւղերը ժողովուրդի մեծամասնութիւնը կը կազմեն:

Հոն ալ մեզմէ աւելի զարգացած է հայ գիրքը. անհրապոյր գիրքերու հետ կան բազմաթիւ լաւ հրատարակութիւններ եւ ժողովուրդը կը գնէ, կը կարդայ, մանաւանդ երբ ազգային բովանդակութիւն ունին, երբ իրենց սրտին կը խօսին: Շատ տուններու մէջ տեսայ փոքրիկ գրադարաններ. հայ գրքեր էին. արտասահմանի մէջ ճրագով փնտռես՝ պիտի չտեսնես այս գեղեցիկ սովորութիւնը. նոյնն է նաեւ օտարներու մէջ, որոնք անպայման ընտանեկան գրադարան ունին:

Շատ թոյլ նշոյլ մը կայ լեզուն կամաց կամաց մաքրելու, եւ եթէ լեզուական մասնախումբը, կազմուած գիտակից գիտնականներէ, քիչ մ'աւելի աշխուրջ ըլլայ, հսկէ եւ պարտադրէ մաքուր հայերէնը, արտասահմանը պիտի ստիպուի նախանձի իրենց: Կովկասահայը հնուց ազգատ եղած է լեզուական հարցի մէջ: Տարօրինակ էր որ քանի մը գրագէտներու հանդիպեցայ, որոնք Խօսնակ, Երեսփոխան, Խօսարան, Գալարար բառերուն ծանօթ չէին, որովհետեւ շատ հեշտու-

թեամբ. սպիքեր, տէպուտատ, պարլամենթ կամ միմիստր կը գործածեն: Եւրոպական բառեր երկու անգամ աղաւաղուած, նախ ուսերէնի մէջ, ապա հայերէնի մէջ:

Բայց հեռաւեժներն հեռուստատեսիլ կ'ըսեն, ճայնասփիւռը դեռ ռատիոյ մնացած է. ուսեստեղէնը փոխուել է բարբարոս կաստրոնով, եւ պատերուն վրայ գրուած. իսկ ի՞նչ կարելի է ըսել այն խառնածին ուղղագրութեան համար՝ որուն դեռ յամառօրէն կառչեր են:

Ժողովուրդի մը ազգային հողին կը զարգանայ գրականութեան արտին մէջ. մինչեւ Ստալին-Պերիա դժբախտ տարիները՝ հայ գրագէտն ու գրականութիւնը ճնշուած էին. շատ տաղանդաւոր մարդիկ կորսնցուցինք. բայց այժմ ժամանակները փոխուել են, յոյս կայ որ ապագան աւելի թոյլատու ըլլայ եւ այս փոքրիկ ժողովուրդն իր դարաւոր մտացի կեանքը վտանգի տակ չտեսնէ:

Արտասահմանի ձուլման տխուր պատկերը կը ներկայացնէ մանաւանդ այն հայութիւնը որ ցրուած է մայր հայրենիքէն դուրս՝ անսահման Ռուսիոյ մէջ: Բացի Վրաստանի կամ Ատրպէյճանի հովանաւորութեան տակ գտնուող հայ գիւղերէն, Թիֆլիզ, Պաղու մեզի համար վտանգաւոր կեդրոններն են: Վրացիները ձուլման խուլ պայքար կը մղեն, Թաթարները դեռ ալը մոլորութեան չեն հասած եւ յաւակնութիւն չունին. բայց Պաղու ուսերէնի հիւանդութիւն ունի, Թիֆլիզ՝ վրացերէնի, եւ վրացիները խուլ պայքար ունին հայութեան դէմ, գործէ կը գրկեն, չեն օժանդակեր հայ դպրոցին ու թատրոնին: Քանի հայ երեխաներ տեսայ, ընտանիքներ, որոնք վրացերէն կը խօսին տան մէջ եւ մանուկը ինքզինքը քարքվի (վրացի) կը կոչէր. պէտք էր ականջը քաշել որ ըսէր թէ Սոմխի (հայ) եմ: Իսկ մականուններու վրայ փակցուցած այդ յարգէ պոչը՝ շվիլի շատ ընտանիքներ վրացի դարձուցեր է. երեւակայեցէք որ Ախալցխայի Նեփիսեան ընտանիքը, որ դարերով Մլէքի հրաշալի Աւետարանը պահեր է կո-

րուստէ եւ ապա Վենետիկի Միթարեաններուն նուիրեր է, այժմ Նեփիսաշվիլի դարձեր է:

Թերեւս Վրաստանի մէջ Ախալքալաքը, գիւղերը, Ախիսաղիայի հայ գիւղերը, Թաթարներու հովանին վայելող Նախիջևանը, Ղարաբաղի փոքրիկ հանրապետութիւնը պահեն իրենց հայկական գիւմաղիժը, բայց Ախալցխան արդէն 20 առ հարիւր վրացի դարձեր է:

Որքան մեծ դեր ունին կատարելիք Հայաստանի գեղարուեստական միութիւնները, թատերական, երաժշտական, երգչախումբ, գրագէտներ, չըլիլ այդ շրջանները եւ ազգային շունչ տալու մարմնողներուն:

Կատարեալ արտասահմանի ցաւալի պատկերն ունի Ռուսիոյ մէջ տարածուած հայութիւնը: Մոլոտովայէն Սիպերիա, Ուրիմէն Արխանգէլ, չուրջ 800-000 հայեր, ոմանք բախտ փնտռելու, ուրիշներ հնուց հաստատուած, ուսանողներ, բանուորներ, աքսորեալներ, մշակներ, հեռացած են Հայաստանէն. հոն վաստակը աւելի դիւրին եւ օրականներն աւելի առատ են: Ուրիշներ հասեր են մինչեւ Սմրգանտ եւ հազարներ են ասոնք, մայր հայրենիքէն հեռու, ուսական ցուրտ հովերը կը փչեն իրենց վրայ եւ ազգային հողին կը սատար: Միայն Մոսկուա 100-000 հայ կը հաշուէ. հոն փոխադրուած են մեր տաղանդները, Ուստուրեան, Մերկէլեան եւ բազմաթիւ գիտնականներ, համալսարանի ուսուցչապետներ, չեմ գիտեր կամաւոր համալսածներ Մոսկուայի փառքէն, թէ բուն փոխադրուածներ՝ դանոնք օտարներուն ուս ներկայացնելու համար: Մոսկուայի մէջ հայկական դպրոց կայ թէ չէ՝ ինծի ծանօթ չէ, գիտեմ որ քահանայ մը ունի. եթէ դպրոց ալ ըլլար՝ վստահօրէն մէկ հայ աշակերտ ալ պիտի չյաճախէր. դործ, գիրք, ապրուստի միջոց, վաղուան մտահոգութիւն հոն ալ կայ եւ ուսական հացը ճերմակ է: Կատարեալպէս Ամերիկայի, Փարանսայի պատկերն ունի այդ հայութիւնը. խառն ամուսնութիւններ, անունի

փոփոխություններ, լեզուի մոռացում ամեն-
օրեայ վերքեր են որ կը բացուին հայ
մարմնին վրայ:

Չեմ գիտեր թե Հայաստանի պետու-
թիւնը, ժողովուրդը, եկեղեցական իշխա-
նութիւնները միջոցներ կը խորհին այդ
ոչխարները հայրենիքի փարախը դար-
ձնելու համար: Կը ստեղծեն ուսման եւ
ապրուստի լաւագոյն պայմաններ՝ որ ե-
րիտասարդութիւնը չզգալթէ դէպի օտար
հորիզոններ: Իրենց մէջ ազգային հոգին
չի պակսիր, մեծ ու պղտիկ ճառեր միշտ
Հայաստանի փառքը կը հիւսեն, եւ այդ
սրտի զեղում է:

Ես ներկայ եղած եմ ճաշարաններու
բազմութիւններու՝ որոնք միայն Հայաս-
տանի կենացը կը խմէին. չեմ կարծեր թէ
լոկ հայկական քոնեաքի հոգին ըլլար, այլ
սրտերէն կու գար եւ յուզում կը պատճա-
ռէր:

Էջմիածինի մօտ, քանի մը բարեկամ-
ներով ճաշարան մը գացի, անկիւն մը
նստած էին չորս երիտասարդներ, քոնեա-
քի չորս շիշերու առջեւ. մէկը հիանալի
ձայնով ազգային երգեր կ'երգէր. ես ըզ-
գացուած մօտեցայ իրեն եւ ըսի.

— Ընկե՛ր, ես արտասահմանէն եկած
եմ Հայաստան այցելելու, ձեր ձայնը սրը-
տիս շատ դպաւ, կարո՞ղ էք ինձ համար
ուրիշ երգեր ալ երգել:

— Ի՞նչ ես ասում, պատասխանեց
նա, հոգիդ սիրեմ, ես քեզ համար բոլոր
երգերը կարող եմ երգել:

Նա շատ յուզումով երգեց եւ իմ անոյշ
Հայաստանի երգը. երգեց ժողովրդական
երգեր, Հայաստանի դովըը հիւսող եր-
գեր: Քիչ վերջ մեր սեղանին վրայ հա-
սան քոնեաքի շիշեր, իրենց հիւրասիրու-
թեան զգացումն էր, արտասահմանի եղ-
բայրներուն սէրն էր, եւ այս սքանչելի
ժողովուրդը պիտի արգարացնէ ամէն ա-
պագայի մէջ մեր լաւագոյն յոյսերը:

Արդար էր որ սիրտս յուզուէր եւ ըսէր
Չարենցի հետ.

Էլի ես որք ու արմավառ իմ Հայաստան
եարն եմ սիրում:

ԿՐՕՆՔ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Հայաստանի մէջ կրօնքի մասին ոչ կը
խօսին եւ ոչ կը մտածեն: Համայնավար
չըջանին ծնած եւ հասակ առած երիտա-
սարդութիւնը, եթէ բոլորովին անասու-
ուած չէ, ոչ մէկ աղօթք գիտէ, ոչ մէկ
կրօնական ուսում ունի, եւ ոչ ալ եկե-
ղեցի կը յաճախէ: Այն չորս կամ հինգ
հազար հայերը՝ որ մեծ տօներուն էջմիա-
ծին կը փութան, մեծ մասով պտոյտի հա-
մար է, ուրիշներ մատաղ ընելու, կամ
հայրենակցական տօն կատարելու, շատ
քիչեր աղօթքի համար կ'երթան. եւ ա-
սոնք մեծ մասով ներգաղթողներ կամ
տարեցներ են:

Երեւանի մէջ հայկական եկեղեցիի դմ-
բէթ չի տեսնուիր, բացի ողորմելի Ս.
Սարգիս աթոռանիստ եկեղեցիէն, որուն
գմբէթը տուններու ճեղքերէն արեւ կը
փնտռէ: Գործածութեան մէջ է Ս. Անա-
նիա փոքրիկ եկեղեցին, նկարիչներու թա-
ղին մէջ, եւ ուրիշ մը՝ հեռաւոր արուար-
ձանի մը անկիւնը:

Քանդուած են բազմաթիւ հին եկեղե-
ցիները գմբէթաւոր եւ կամ որմանկար-
ներով զարդարուած:

Ո՛րքան գեղեցիկ պիտի ըլլար Երեւանը՝
երբ երկնաւազ գմբէթներ բարձրացած
ըլլային անոր միաձեւ չէնքերէն վեր, գա-
նազանութիւն զնելով քառակուսի տունե-
րուն մէջ, եւ կոտրելով միապաղաղ ճար-
տարապետութիւնը: Ոչ մէկ գեղեցիկ պա-
լատ Երեւանի մէջ պիտի կարենար փոխա-
րինել եկեղեցական հոյակապ ճարտարա-
պետութիւնը: Մենք հպարտութեամբ օ-
տարներուն ցոյց կու տանք մեր սեփական
ոճն ու փառքը եւ մերժեր ենք մեր մայ-
րաքաղաքին մէջ:

Ո՛րքան գեղեցիկ պիտի ըլլար Լենինի
հրապարակին վրայ Նալպանտեան փողո-
ցի անկիւնը, ուր խոշոր բաց մը կայ, ե-
թէ բարձրացած ըլլար հայկական ոճով
հոյակապ տաճար մը, հրապարակը տա-
նապատիկ պիտի գեղեցկանար, ինչպէս
Փարիզ իր Նոթր Ծամով, Մոսկուա իր Ս.
Սահակի եկեղեցիով եւ Վենետիկ իր Ս.

Մարկոսով: Երբ այս գաղափարը յայտ-
նեցի ճարտարապետի մը, նա պատասխա-
նեց. Իսկապէս գեղեցիկ պիտի ըլլար,
բայց կարելի չէ նոյնիսկ խորհիլ:

Անդին Թիֆլիզի մէջ եւ 18 գմբէթներ
համբեցի. մեծ մասը վրացական եկեղե-
ցիներ. հայոց 24 եկեղեցիներէն քիչեր
վերապրեր են ջարդերէն, եւ շատեր շտե-
մարան կամ զբօսարան եղեր են, բացի
Ս. Գէորգ եկեղեցիէն (թերեւս Սայաթ
Նովայի սիրուն՝ ուր թաղուած է) եւ Ս.
Աւետարան եկեղեցիէն: Բան մ'է սակայն,
18 գմբէթներ ունի Թիֆլիզ, Երեւան մէկ
հատ, եւ այն անտեսանելի, լոյսի կա-
րօտ:

Համայնավարները կրօնքի հարցը լուծ-
ուած կը համարին. բայց կրօնքը մարդու
հետ կը ծնի եւ մարդու հետ կ'ապրի:

Երեւան ուղղակի Վեհափառի թեմն է,
ունի իր փոխանորդական առաջնորդը.
Վահան վարդապետ Տէրեան (Քեսապցի),
եռանդուն եւ զարգացած եկեղեցական մը.
Բայց ի՞նչ կրնայ ընել քանի մը տէրտէր-
ներու օժանդակութեամբ՝ 550.000 բնա-
կիչով քաղաքի մը մէջ:

Հայաստանի գիւղերուն մէջ կան հին
եկեղեցիներ, մեծ մասը ամայի, կան եւ
բաց եկեղեցիներ, ուր տեղացիները կ'եր-
թան մոմերով պատերը մրոտելու կամ
հին պատկերներ համբուրելու, սակայն
գրեթէ քահանայ չունին: Հայաստանի
գիւղերուն մէջ աւելի Ստալինի գաճէ ար-
ձաններ կան, քան քահանաներ. մինչ
Վրաստանի մէջ ասոր ճիշտ հակառակն է:

Երեւանի մէջ դժուար է տեսնել կրօնա-
կան պսակ կամ թաղում, մկրտութիւնը՝
յայտնի կամ ծածուկ՝ աւելի յաճախ կը
կատարուի:

Դպրոցներու մէջ հակակրօնական պայ-
քարը տակաւին կը շարունակուի եւ ու-
նայն ճիգեր կ'ընեն մարքսիստական նիւ-
թապաշտ բարոյականով անմահ հոգիներ
կրթել: Մայր մը ցաւելով պատմեց թէ,
անգիտակից մանուկներ պատեղը կամ ա-
րեւը քարկոծելով՝ Աստուած եւ հրեշ-
տակները կը հալածեն. անշուշտ քանի մը
վաստակաւոր ուսուցիչներու ազդեցու-

թիւնն է, որոնք Լենինի չքանչանին կը
սպասեն, եւ ոչ թէ վերին հրաման:

Երեւանի համալսարանի մէջ հաստատ-
ուած է հակակրօնական առանձին բեմ,
բայց կարծեմ շատ խանդավառութիւն չէ
գտած. ուսանողները աւելի կարճ ճամ-
բան բռնած են, կրօնքով չզբաղիլ, քան
թէ սորվիլ որ կրօնքը հաշիշ է եւ վնասա-
կար:

Ինչպէս բոլոր համայնավար երկիրնե-
րու մէջ, այսպէս եւ Հայաստանի եկեղե-
ցին բոլորովին անջատուած է պետութե-
նէն. անոր դոյութիւնը պարզապէս թոյլ
տրուած է եւ ոչ թէ իրաւական է: Հակա-
սական պիտի ըլլար հալածել կրօնքը եւ
ընդունիլ անոր պաշտօնական դոյութիւ-
նը:

Նախարարներու (մինիստրներու, ինչ-
պէս իրենք կը կոչեն) խորհուրդին կից
կայ կրօնքի պաշտօնեան, որ հին ցարա-
կան շրջանի համբաւաւոր Բրազուրոն է:
Եկեղեցական իշխանութիւնները իրենց
խնդրանքները, յարաբերութիւնը պետու-
թեան հետ բրոգուրորի միջոցով պէտք է
կատարեն: Ասիկա նոյնն է ռապպին հա-
մար, չէլիին համար. Կաթողիկոսներու
համար: Այլ է թէ Վեհափառը շատ սիր-
ուած եւ յարգուած անձ է՝ ըլլա՛յ Հա-
յաստանի եւ ըլլա՛յ Մոսկուայի մէջ. աւի-
կա իր անձնական արժանիքն է եւ իր աղ-
գասէր գործունէութեան արդիւնքը:

Պէտք է ընդունիլ թէ Ստալինեան շրջա-
նի ներոնական հալածանքները դադրած
են, ուղղը կրնայ եկեղեցի յաճախել ա-
ռանց Սիպերիայի վախին, առանց գործէ
զրկուելու վտանգի: Ասիկա պէտք է ըսել
նաեւ քաղաքական կամ ընկերային հար-
ցերու համար: Ունին ժողովրդական կամ
բարձրագոյն ատեան, փաստաբանական
պաշտպանութիւն՝ յանցաւոր մը օրէնքով
պատժելու համար:

Այժմ կրնան ազատ կերպով իրարու
տուն հիւր երթալ, փողոցները համարձակ
չըջիլ ու խնդալ բարձրաձայն, խմել Հա-
յաստանի կենացը, մինչ 1936ին Երեւան
մեռելատուն էր:

Համայնավար երկիրներու մէջ երկու

բանի վրայ խիստ լուծված կը պահեն, կրօնքի եւ քաղաքականութեան:

Հայաստանի եւ ընդհանուր Կովկասի մէջ կան նաեւ շուրջ 175.000 կաթողիկէ հայեր, ցրուած Լենինականի, Ախալքալաքի, Ախալցխայի շրջանները. միայն Երեւան 10.000 կաթողիկէ հայեր կը հաշուէ: Այս համայնքը լքուած որբի կը նմանի, ոչ մէկ քահանայ կամ առաջնորդ ունի. ըսին թէ Լենինականի կողմերը դեռ ամուսնացեալ երկու քահանաներ կան: Ունին ծերունի քահանայ մը Թիֆլիզի մէջ, կիսով լատին, կիսով վրացի. ես հասկեցայ թէ ինչ ծէսի կամ ազգի կը պատկանէր: Հայ կաթողիկէները բոլորովին զրկուած են եկեղեցական պաշտամունքներէ: Իրենց առաջնորդները եւ քահանաները ստալինեան շրջանին աքսորուեցան ու մեռան օտարութեան մէջ. նոր քահանաներ ձեռնադրելու առ այժմ հնարաւորութիւն չկայ: Քաղաքներու մէջ իրենց եկեղեցիները քանդուած են, գիւղերու մէջ շատերը փակուած կը մնան, կամ շտեմարան եղած են կոլտոզական ապրանքներու: Կան որ բաց են եւ տիրացուներ կը կատարեն չարաթ երեկոյեան ժամերգութիւն կամ թաղում: Հակառակ այսպէս անդլուս վիճակին, կաթողիկէ հայերը շատ աւելի հաւատք ունին եւ եկեղեցասէր են: Նոյնպէս կը շարունակեն իրենց ուխտագնացութիւնները հեռաւոր տեղեր, մանաւանդ Կիւմրիի նշանաւոր Տիրամօր:

Կայ նաեւ հայ աւետարանական փոքրիկ համայնք մը, որոնց թիւը շատ քիչ է. ունին հովիւ մը ներգաղթած. իր կեդրոնը Լենինական է. սակայն եկեղեցի չունի եւ տուններու մէջ պաշտամունք կը կատարէ. թէպէտ յաճախորդներ քիչ ունի, սակայն կը ջանայ զանոնք բազմացնել:

Ժողովուրդի մը համար կրօնքի հաւասար աւագ կարեւորութիւն ունի եւ բարոյականը: Արտասահմանի մէջ այս մասին շատ մտահոգիչ լուրեր տարածուած են. պարզ հետեւանք, ուր կրօնք չկայ՝ բարոյական չկայ: Ըստ իս՝ Հայաստանի բարոյական ոչ մէկ կերպով ցած է Ծը-

բանսայի կամ Ամերիկայի բարոյականէն: Ստահակներ ամէն կողմ կան: Հայը աւանդաբար կապուած է իր ընտանիքին եւ սրբութիւններուն: Փողոցներու մէջ փառիզի մեղի երեւոյթները չէք տեսներ, եւ ոչ ալ ցերեկը կամ գիշերը ատեն պարտէզներու մէջ անպատշաճ տեսարաններ: Չկան օրիորդներ երեսնին դերասանի պէս դեղած, ոտք ոտքի նստած, ծխախոտը իրենց բերնին մէջ: Ինծի ըսին թէ Կոմիտասեան այգին է բարոյազուրկներու վայրը. սակայն հարցուցի լուրջ մարդերու եւ մտահոգիչ պատասխաններ չտրւին: Իսկ ամուսնութիւններու լուծում եւ ապօրինի միութիւն թերեւս շատ ըլլան, ես փաստեր չունիմ:

Հայաստանի կառավարութիւնը աշաւորջ կը հսկէ ժողովրդական բարոյականին վրայ, խստիւ կը պատժէ յանցաւորները: Աւագակութիւնը, խուլիկանութիւնը ժամանակ մը մեծ գործունէութիւն ունէին, կամաց կամաց ասոնք ալ մաքրուած են: Ես տոլարներով ծանրաբեռն ամերիկահայեր տեսայ, բայց ոչ մէկն ալ կողոպտուած էր:

Այլ է թէ ամէն ոք պաշտօնեայ կամ գործաւոր, չարժաւար կամ խանութպան, գիւղացի կամ ուսուցիչ կ'աշխատին բարձրացնել իրենց անբաւարար ամսականները՝ երկրորդական միջոցներով, թէ սեւ շուկան տեսողին կ'աշխատի, մէկ տոլարը մինչեւ 70 ռուպլի կը գնեն, կամ պետական առեւտուրը կ'օգտագործեն. ասիկա ընկալեալ սովորութիւն դարձած է եւ տեսակ մը դադարի վարձատրութիւն կը համարին: Ամէն ոք գիտէ. Վրաստան աւելի լաւ գիտէ, բայց ոչ ոք կը խօսի:

ԴԵՊՈՒ ԱԽԱԼՑԽԱ

Թողնել հայրենիքն ու դարձեալ պանդխտութեան ցուպն առնել եւ հեռանալ, հեռանալ, շատ դժուար բան է. սիրտը կ'ըմբոստանայ, աչքերը կը մնան հայրենի հողին կառչած. բայց պէտք է մեկնել. տխուր ճակատագիր է մեղի համար: Քանին՝ տեսայ հեռաւոր Ամերիկայէն

կամ Պրազիէն եկած, կը փափաքէին դեռ քիչիկ մ'ալ վայելել Հայաստանի քաղցրութիւնը, ծանր վճարումով խկ, կարելի չեղաւ եւ դեռ չկտացած մեկնեցան:

Ես աւարտեի էի մէկ ու կէս ամսուան բանասիրական աշխատանքներս Մատենադարանի մէջ. եթէ հարկ ըլլար օրինակել ինծի կարեւոր ձեռագիրները՝ թերեւս ամիսներ դնէի, սակայն Մատենադարանի վարչութիւնը աղնիւ օժանդակութեամբ լուսանկարեց եւ ինծի յանձնեց, որոնց պարտական եմ եւ շնորհակալ եմ: Իմ սակաւ օրերս բազմացուցին եւ երկարեցին Մշակութային կապը եւ Վեհափառը, իրենց հիւր համարելով, եւ առիթ եղաւ պարապ օրերու կամ կիրակիներ այցելել Հայաստանի հնութիւններուն: Ես խորապէս շնորհակալ եմ իրենց աղնիւ զգացումներուն եւ հիւրասիրութեան:

Մեկնումիս նախորդ երեկոն, բարեկամներու հետ ընթերցեցինք Սեւան ճաշարանի մէջ. կայ նաեւ Կովկաս ճաշարանը, որուն մնայուն եւ գինեւէր յաճախորդը Յովհաննէս Ծիրազն է, սակայն Սեւանը աւելի լաւ էր: Անշուշտ յուզումով անցաւ. եւ եթէ խմէի այն ընտիր գինիներն ու քոնեաքները՝ ես չորս օր վերջ հազիւ պիտի կարենայի մեկնել:

Ես հանրակառքով Թիֆլիզ պիտի մեկնէի: Հանրակառքը ուշ պիտի մեկնէր, առաւօտեան ժամանակ կար երեւանը անգամ մ'ալ տեսնելու: Եկան երկու լաւ բարեկամներ.

— Դուն երեւանը լաւ չես տեսած, քեզ պատցնենք, ըսին: Ինքնաշարժ գրին եւ սուրացինք թաղէ թաղ, հեռաւոր թաղեր, նոր ճամբաներ: Երեւան ամէն օր իր թեւերը աւելի կ'երկարէ, կը դրաւէ դաշտեր եւ բլուրներ: Փորով բազմաթիւ մեքենաներ կ'աշխատէին, բարախուն, կենդանի էր իրենց աշխատանքը, նոր տուններ պէտք է շինուէին՝ սեղմուած ժողովուրդին համար: — Փոքրիկ Մոսկուա մը պիտի շինենք, կ'ըսէին հպարտութեամբ:

Ինչո՞ւ չէ, Անին շինող ժողովուրդը, արդիական միջոցներով Մոսկուա մ'ալ կրնայ կերտել: Զիրենք մտահոգ դարձ-

նողը մօտակայ պատերազմի մը վախն է. անոնք հաւատացեր են թէ Ամերիկա եւ դրամատէր երկիրները մէկ օրէն միւսը յարձակումի պիտի անցնին. չեն ուզեր հաւատալ թէ ամէն կողմ մայրերը նոյնն են, կիները նոյն, եւ թոյլ չեն տար որ իրենց մարդիկը սպանդանոց երթան, թէ բովանդակ աշխարհ խաղաղութիւն կ'ուղէ:

Թիֆլիզ մեկնող հանրակառքը պատրաստ էր Շահումեան հրապարակին վրայ, կային եւ այլ հանրակառքեր, դէպի Լենինական, Կիրովական, Ջանգեղուր եւ ուրիշ ուղղութիւններ:

Թիֆլիզ-Երեւան եւ չորս անգամ ճամբորդեր եմ, ամէնէն տպաւորիչը օդային ճամբան էր: Գիշեր ատեն Թիֆլիզէն Երեւան, երեք քառորդ ժամուան ճամբայ է: Մութ էր. անցանք լեռներ. անցանք Սեւանը եւ երբ մօտեցանք Երեւանին, վաւեր էր որ հայ էր, մեղ կանչեց իր մօտ. — Տեսէք, ըսաւ, ահա երեւանը, լոյսերու քաղաք. ահա անդին Թուրքիան՝ խաւարի աշխարհ:

Եւ խկապէս չէի տեսած այդքան լուսաւոր քաղաք եւ ոչ Եւրոպայի մէջ, եւ տեսած այդքան մութ աշխարհ Թուրքիայի պէս:

Հանրակառքով ճամբորդութիւնն ալ ունէր իր հանդիմանը եւ ես երկրորդ անգամ կը կատարէի այդ ուղին:

Թիֆլիզ մեկնող հանրակառքը մաքուր եւ արդիական էր. տոմսակը 60 ռ. իսկ ժողովրդական հանրակառքը, շատ դաւառային՝ տոմսակը 40 ռուպլի էր՝ երեւան-Թիֆլիզ:

Գրագէտներ, բարեկամներ, ազգականներ հաւաքուած էին Շահումեան հրապարակի վրայ. անոնք ողջերթի եկած էին. ամէն մէկը ձեռքին նուէր մը առած էր, գիրք, քոնեաք, անուշեղէն, հայկական տուրմ (չորտայ): Մեր բաժանումը սրտազին եղաւ եւ վերադարձի ջերմ մաղթանքներով: Որքան պակասութիւններ ալ ունենայ հայը՝ սիրտ մ'ունի, որ ուրիշ ազգերու կուրծքին տակ չկայ եւ երեւանցին սրտազին է իր զգացումներով:

Հանրակառքը ճամբայ ելաւ:

— Բարի՛ երթ եւ բարի վերադարձ, կանչեցին բոլորը:

Քչորը վրացի էր, ճամբորդներն հայեր, հանրակառքը հայ-վրացական: Բռնեցինք Սեւանի ճամբան: Երկու ժամ յետոյ տեսնուեցաւ միշտ պայծառ, միշտ կապոյտ լիճը, տեսնուեցան իր թերակղզին ու եկեղեցիները: Հիւսիսային եզերքէն անցանք դէպի Սիմոնովք: Ճամբան դեռ աւելի կը բարձրանար եւ լեռ լեռան կը յաջորդէր: Քանի մը ցրուած գիւղեր, արածող անասուններ, խոտի դէղեր, քանի մը կաղամբ արտերու մէջ, եւ ահա հասանք բարձրագոյն կէտը. անկից վար պիտի իջնէինք. դահալէժ ճամբայ մը, կպրապատ, եւ օձապտոյտը սկսաւ դառնալ լեռան կողերը լիզելով: Դիմացը ցած ծառերով անտառ մը, ոսկի գոյն առած, աչնան հետ. անոր կողերէն երկար օձի մը պէս վեր կը բարձրանար հսկայ խողովակ մը, դա կապոյտ բոցն էր որ Պագուէն վառելանիւթ կը բերէր: Բաւական վար իջանք եւ ճամբան կտրեց քանի մը կոկիկ գիւղեր. ասոնց բնակիչները Մալականցի են, աղանդաւոր ուսեր՝ զորս ձարերը հոս աքսորած են. անոնք դեղնադոյն են, եւ ուսերէն կը խօսին: Քիչ վերջ եկաւ ճամբաւաւոր Դիլիմանը իր խնձորի եւ տանձի այգիներով: Բնութիւնը լեռնային ալպիական է, սակայն Դիլիմանը ճամբաւ ունենալու ոչ մէկ արժանիք ունի. նախնական գիւղ է. արուեստը ձեռք չէ զարկած. մաքրութիւն չունի. հայերը հոս արձակուրդի չեն գար, Սեւ ծով կ'երթան:

Երեւան-Թիֆլիզ ճանապարհը շուրջ 275 մղոն է, որուն երեք քառորդը Հայաստանի մէջէն կ'անցնի: Մտանք դաշտեր եւ վերջին հայ գիւղը թրքական անուն ունէր:

Հանրակառքը կանգ առաւ աղբիւրի մը մօտ. քանի մը պատանիներ հոն կեցած էին.

— Այս գիւղին անունն ի՞նչ է, հարցուցին:

— Ուզունքափա, պատասխանեցին բոլորը միասին:

— Ուզունքափա, սա թրքական անուն է, ինչո՞ւ չէք փոխած, ըսի ես:

— Ի՞նչ անուն դնենք, հարցուցին իրարու:

— Քաջքերտուցի դնենք, ըսաւ մեծ գլխով պատանի մը:

— Այո՛, Քաջքերտուցի, լաւ անուն է, պատասխանեցին միւսները: Երթանք կուսակցութեան քարտուղարին եւ փոխել տանք այս օտար անունը:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը. քանի մը մղոն անդին պիտի մտնէինք թաթարական հողը. սահմանագիծը չկայ եւ ոչ անցագիր կամ մաքսատուն. ամէն կողմ սովետական մեծ հայրենիք է: Լեռան մը վրայ տեսնուեցաւ հինաւուրց բերդ մը. վրացիները՝ ուր բերդ մը տեսնեն, կ'ըսեն թէ Թամար Թագուհին շինած է. հողը հին Արցախի հայկական գաւառն է, իսկ այժմ Թաթարներուն է, բերդը Աստուած գիտէ թէ ով շինած է:

Կտրելով Աղստու գետը՝ դայն մեր աջին ձեռքինք: Դաշտային երկիր էր, տեղացիները՝ հայ-թաթար խառն՝ բամպակի մշակութեամբ կը զբաղին եւ կպրապատ ճամբուն վրայ փռած էին երկար դէղեր, այնպէս որ ինքնաշարժը ստիպուած էր արտերէն անցնիլ եւ ապա ճամբայ արձնել: Քառորդ ժամ տեսեց թաթարական շերտը եւ մտանք վրացական մասը, բայց բնակիչները դարձեալ հայ եւ թաթարներ էին: Քիչ վերջ լազուտի դաշտեր երեւցան:

— Հիմա հասանք Վրաստան, ըսի ինքնիրենս, եւ խորհեցայ թէ ինչու լազուտի կոտող մը իրենց զինանշան չեն բրած:

Ընդարձակ տափարակի մը վրայ տեսնուեցաւ Ռուստաւի քաղաքը, նոր կառուցուած, հրամանով եւ հաճութեամբ Ստալին-Պերիալի, ուր կը գտնուէր Կովկասի պղնձի մեծագոյն ձուլարանը: Հոս է որ կը թափի Ալլահվերտիի եւ Չանգելուրի հանքերուն հում նիւթը եւ ճարտարարուեստի կը վերածուի: Հակառակ հայերու արդար բողոքին, ձուլարանը իր

իսկական տեղը՝ Հայաստան փոխադրելու, Մուսկուա անդրդուելի մնաց:

Մուսկուա արդէն կոխած էր՝ երբ Թիֆլիզի լոյսերը տեսնուեցան, բայց ոչ Երեւանի պէս չքեղ լուսավառութիւն:

Նոյն գիշերն հարկ եղաւ շոգեկառք առնել դէպի Ախալցխա: Չորս օր պայմանաժամ ունէի հայրենական տունս տեսնելու: Պիտի ըսէք թէ ի՞նչ աշխարհ է՝ որ թոյլ չեն տար իր տունն ու սիրելիները տեսնելու: Ախալցխան թրքական սահմանին վրայ է եւ Թուսերը Թուրքիայէն անդին Ամերիկան կը տեսնեն: Առաւօտեան արդէն հասանք Պարթաւ. հիանալի հովիտներ Սուրաւ լեռներու մէջ: Չարերու շրջաններէն եղած է ամարանոցներու վայր, եւ Պորթոմ շատ հայեր ունէր, աւելի քան վրացի. այժմ չեմ գիտեր թէ դերերը փոխուե՞ր են արդեօք:

Շինած էին Ժողովրդական քանի մը ամարանոցներ, թէ՛ օդին եւ թէ՛ հանքային ջուրերուն համար:

Վրացիները շիշերով կը վաճառեն Պորթոմի ջուրը, սակայն ոչ Հայաստանի Ջերմուկին եւ ոչ Արդնի ջուրերուն կը հասնի: Բայց Վրաստանի մէջ պարտաւորիչ է Պորթոմի ջուր խմել, ինչպէս իրենց քոնեաքը. բայց եթէ մարդ անգամ մը բերնին տանի՝ իսկոյն պիտի ըսէ. Անցցէ յիկէն քաժակդ այդ:

Ախալցխայէն քսան մղոն առաջ մենք հասանք Ազդուր գիւղը Փոցիսով (Կուրի մէկ օժանդակը) գետի ափին: Շոգեկառքը կանգ առաւ: Գիւղը լայն եւ այգեւէտ հովիտ մ'ունի եւ գետի աջին հին բերդ մը. ժամանակին նա Աղի ձոր կը կոչուէր. բայց ո՞վ շինած էր այդ բերդը, Վրացիները անշուշտ Թամար Թագուհին պիտի ըսեն, սակայն այդ հողերը Գուգարք նահանգի Ջաւախք գաւառին կը պատկանէին եւ կարծիք է՝ թէ Սմբատ առաջին տիրապետած ու շինած է այս եւ ուրիշ բերդեր: Պարսիկ եւ Թուրք տիրապետութեան ժամանակ՝ գիւղին բնակիչները դարձեր են մահմետական, ինչպէս Աճառացին, Ափխազն ու Վրացիներու մեծ մասը:

Հոս էր սահմանագիծը: Պահակներ

ըր, հրամանատարները բոլորն ալ Ռուս էին: Եկաւ զինուոր մը թուրքերը քննելու. նայեցաւ անցագրիս, բան չ'առեցաւ, բայց պաշտօնական կնիքները կային. նայեցաւ երեսս եւ ըսաւ. Ախալցխա հրամանատարին ներկայացէք:

Իսկապէս բացառիկ շնորհ էր՝ որ ըրած էր ինծի Հայաստանի կառավարութիւնը եւ ես պարտաւոր եմ շնորհակալ ըլլալ պետութեան եւ աշխատողներուն:

Առաւօտեան ժամը 9ին մտանք Ախալցխա: Ջինուորական իշխանութիւնը բռնած էր կայարանը: Հրամանատարը շատ աղնիւ եղաւ, զիս հրաւիրեց վայրկեան մը քովը նստիլ եւ ոտքի մնացին զննապետները: Քննեց անցագիրս, կանչեց զինուոր մը եւ ըսաւ. Առաջնորդէ զինքը ոստիկանատուն:

Ջինուորն ատրճանակը մէջքին՝ առաջ ինկաւ:

— Վերցուր ատրճանակդ, հրամայեց սպան, հետդ եկողը աննշան մէկը չէ:

Ջինուորը դեղին եւ դեղեցիկ երիտասարդ մէք, ուրախ տիպար մը, ո՞վ գիտէ որ աշխարհէն հոն ինկած էր: Անցնելով քաղաքի մէջէն, ես կարօտով դիտեցի այն Ախալցխան, որ մանկութեանս ատեն՝ ինձ համար ամբողջ աշխարհն էր իր հիանալի տուներով եւ կառավարչայով (հասարակաց պարտէզ). յիշեցի կապոյտ աքապիաները, եկեղեցիները. բայց հիմա տունները ցած էին, կարծես աչքերուս ծերացած ու կրած էին, չկային եկեղեցիները, Ամենափրկիչ, Ս. Փրկիչ. չկար Հ. Եփրեմ Սէթեանի՝ Ախալցխայի առաքեալին դամբանը, որ հիւանդներու ուխտավայր էր (Վենետիկի Միաբան էր):

Ոստիկանատունը հին չէնքի մը մէջ էր. երկու վրացիներ նստած՝ նարտ կը խաղային: Ջինուորը սկսաւ հետեւնին խաղալ, ապա ինծի դարձաւ եւ ըսաւ. Եկուր խաղ մը միասին ընենք. ընտանեկան ոստիկանատան կը նմանէր. նա յաղթուեցաւ եւ ահա ներս մտաւ իրենց գլխաւորը. հայ էր.

— Ինչո՞ւ այս պատուաւոր մարդը կը սպասցնես, սաստեց վրացիին. ա՛ռ անու-

նը եւ թող հանդիստ իր տեղն երթայ: Յետոյ ինծի դառնալով՝ ըսաւ աղնիւ չեղ-տով. կարող էք երթալ ձեր սիրելիները տեսնել, շատ հեռուները չգնաք, փափուկ տեղեր են:

Ախալցխան կը գտնուի Փոցխով գետի ափերուն՝ երկուքի բաժնուած: Աջ ափին քաղաքին կեդրոնը կը գտնուի, ձախին բարձր ժայռ մը, վրան ուրիշ թաղ մը՝ Ռապաթ անունով: Հոս կը բնակին վրացախօս հայ կաթողիկէներ, իրենց ծէսը հայկական էր, հայ լեզուով, բայց այժմ իրենք զիրենք շվիլի կ'անուանեն: Հոն կայ նաեւ հրէական կեթքոյ (թաղ) մը:

Քաղաքի բնակչութիւնը թերեւս 45էն 50 հազարի հասնի. ջախջախիչ մեծամասնութեամբ հայեր են, որոնց ձեռքն էր առեւտուրը եւ կեանքը: Հակառակ վրացական անունի՝ հնուց ի վեր եղած է հայաբնակ (Ախալցխէ - նոր բերդ): Ժ. դարուն արդէն ունէին Առաքելոց եկեղեցին: Երբ 1828ին Ռուս-թրքական պատերազմը ծագեցաւ, Ախալցխան թուրքերու միջնաբերդն էր. հոս էր որ տեղի ունեցաւ ամէնէն աւելի կատաղի պատերազմը. սակայն Բէհբուխան հայ զօրավարը, յանուն ձարին գրաւեց զայն, եւ թուրքերը նախկին հայ բնակիչներէն 10.000 հայ տարին Արտասանի կողմերը եւ կոտորեցին զանոնք. հոն մէկ հատ վրացի չկար: Ներկայ բնակչութիւնը Կարինի զաղթականներն են, ինչպէս Լենինականի, Ախալքալաքի եւ անոնց գիւղերու բնակիչները:

Ախալցխան եղած է գործունեայ, մտացի եւ յեղափոխական: Անոր զաւակները բռնած են Կովկասի կեդրոնները, մասնաւորապէս առեւտուրի մէջ: Կը յիշեմ իր ֆէտայիները, զաղախներու հետապնդումները զանոնք ձերբակալելու. բայց Ախալցխան ըմբոստ էր եւ թաղերու մէջ յեղափոխական երգերը միշտ կը լսուէին: Այսօր ալ ունի բազմաթիւ գիտնական զաւակներ, ինչպէս Մանանդեան, Ղաֆազարեան եւ ուրիշներ:

Ճարտարարուեստ գրեթէ չունի, դեռ վերջին պատերազմին՝ Պորթոմէն հոն հա-

սաւ շողեկառքը, չնորհիւ նորագիւտ ած-խահանքերու:

Քաղաքին մէջ կը հրատարակուի Կոմունիստ անունով տեղական լրագիր մը: Ունի իր վարժարանները, բարձրագոյն կրթարաններ, ուր հայերէն եւ ռուսերէն լեզուները կը սորվին. վրացերէնը պարտաւորիչ չէ:

Ախալցխայի դաւառը չըջապատուած էր հայ եւ մահմետական գիւղերով. մէկ հատ վրացի գիւղ գոյութիւն չունէր: Սովետները վերջին պատերազմին տեղահան ըրին թրքացած բնակչութիւնը՝ զանոնք թուրքեստան ճամբելով, եւ անոնց գիւղերը բռնեցին վրացիները, չեմ գիտեր ուրտեղէն հաւաքելով: Վրաստանի կառավարութիւնը յուսարեկ Ախալքալաքէն՝ կը ջանայ Ախալցխան Քարքվիլի ընել. այսօր 20 առ հարիւր վրացիներ կան եւ բոլոր պաշտօնները, հաստատութիւնները գրեթէ զբաւած են:

Ինքնաշարժը եղերելով Փոցխով գետը՝ զիս պիտի տանէր իմ ծննդավայրս, Նորչէն գիւղը (վրացերէն Ծղալթիլա, որ է տաֆ ջուր), 13 մղոն դէպի արեւելք: Այդ շրջանի գիւղերը 7 հատ, հայ կաթողիկէ են, բաւական լաւ տնտեսութիւն ունին եւ հանդարտ մարդիկ են: Նորչէնը հազիւ մէկ մղոն հեռու է թուրք սահմանէն. լիրբ սահման մը, ուր դըժբախտաբար խելքն ու իրաւունքը չէ որ գործեր են, այլ բռնութիւնն ու դէպքերը: Փոցխովը Տայքի լեռներէն կու գայ, հիանալի հովիտներ եւ անտառներ ունի. վայրենի Զուիցեքիա մը: Հիմա թուրքերոյ կը պատկանին այդ հովիտները եւ թուրքերը աղքատ գիւղեր ունին, քանի մը պահակներ եւ առատ գայլեր: Գետէն անդին մընացեր են հայ գիւղերու հին ուխտատեղիները. գետէն ասդին հին եկեղեցիներու աւերակներ. հաւանական է որ 1795ին պարսիկներու կատաղի Մահմուտ խանը արչաւած եւ աւերած ըլլայ այդ շրջանները. թրքացածը մնացեր է, քրիստոնեան ջարդուեր է:

Ներկայիս գիւղերը շատ զարգացած են, ունին գեղեցիկ բնակարաններ: Ոմանք

մինչեւ իսկ Հայաստանէն կարմիր չեչաքար բերած են իրենց տուններու ճակատը զարդարելու:

— Հայաստանի գեղեցիկ պատկերը կ'ուզեմ ամէն օր տանս վրայ տեսնել, ըսաւ ինծի գիւղացի մը:

Բազմաթիւ երիտասարդներ կը յաճախեն համալսարաններ, ունին տասնամեայ դպրոցներ (լիսէ) ուր հայերէն եւ ռուսերէն լեզուները կը սորվին: Գիւղերն իրենց ակումբները չինած են, հաւաքելով եւ ընթերցման դիրքեր: Ելեկտրական լոյս եւ նամակատուն ալ հաստատուած են, մինչ ժամանակին քարիւղ կը վառէին. հիմա գիւղերը լուսաւոր է, եւ անդին թուրք գիւղերը մութին մէջ: Տարիներ առաջ մաքաննեղութեամբ թուրքը մէկ թիթեղ հալած կարագ կը բերէր՝ մէկ թիթեղ քարիւղի փոխարէն. հիմա սահմանը խստօրէն փակ է եւ խեղճ թուրքը մութին մնացած է:

Բայց ընթերցողը պիտի ըսէ. Ի՞նչ նըշանակութիւն ունին մեզի համար այդ գիւղերը, ինչո՞ւ խօսիլ անոնց վրայ: Լեզուն հոն կ'երթայ՝ ուր սիրտը կը գտնուի: Չորս օր, ոչինչ է տարիներու կարօտին համար: Չորս օր, չորս արեւներ, որ սահեցան Մանթաշի լեռներու վրայէն. եւ համբուած օրերը չուտով կ'անցնին: Մեր կեանքը կաղմուած է բաղձանքներով եւ սպասումով, եւ ապա վայրկեան մը վաճելով, դարձեալ բաղձանք եւ սպասում. այսպէս եղաւ եւ ինծի համար. չորս օրերը չուտով անցան, չեմ գիտեր որո՞ւ հետ խօսեցայ եւ ո՞ր սիրտն համբուերցի. չորս օրերն անցան եւ ես պէտք էի հրաժեշտ տալ ընտանիքին, գիւղին, անտառներուն եւ արեւին: Վերջին անգամ ծունը դնել ծնողքիս շիրիմին վրայ՝ գէթ գթած «Հողոց» մը արտասանելու:

Բոլոր գիւղացիները մեկնող ճանապարհին վրայ թափած էին, ոմանք թաչկի-նակն աչքերուն, ուրիշներ թաչկինակը օղին մէջ եւ գիւղը, Նորչէնը կամաց կամաց ծածկուեցաւ բլուրներու ետեւ եւ մընաց սրտիս մէջ:

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

1960 Հոկտեմբեր 21ին շողեկառքը ճամբայ ելաւ դէպի Թիֆլիզ: Անցագրի քըն-նութիւնը աւելի խիստ էր. թուրքիայէն լրտեսներ անցած են սահմանը. ո՞վ տեսած էր, ո՞ւր էին, ոչ ոք գիտէր: Ախալցխան ալ ետեւ մնաց, անցանք Աղդորը եւ Պորթոմը. ահա Գորիսը, Ստալինի ծննդավայրը: Այստեղ ծնած է Համայնավարներու երբեմնի ամենագործը: Գետը մեզի կ'ընկերէր, լեզուն վրացերէնի փոխուեցաւ: Ստալինի տունը թանգարանի փոխուած է:

— Երանի՜ թէ կարելի ըլլար տեսնել Ստալինի տունը, ըսի վրացի հարիւրապետի մը, իր զգացումներն հասկնալու համար:

— Ամենայն սիրով, պատասխանեց նա, ես կը կարգադրեմ՝ որ նոյն տոմսակով երեկոյեան գնացքը առնէք. կ'արժէ տեսնել. հոն աշխահիս մեծագոյն մարդը ծընած է:

Դեռ Ստալինը խորաններու վրայ էր, եւ վրացին շատ հպարտութեամբ արտայայտուեցաւ Չուկաշվիլիի մասին:

— Իսկապէս ցաւալի է, պատասխանեցի, ժամանակ չունիմ. այսօր իսկ սաւառնակ պէտք է առնեմ Օտեսսա մեկնելու համար:

— Մե՛ղք, ըսաւ նա, մեծ առիթ մը կը կորսնցնէք այդ անմահ հանճարին տունը չտեսնելով: Դուք Եւրոպայի մէջ տակաւին չէք գիտեր՝ թէ ինչ մեծ հանճար էր Ստալինը: Վրաստան իր հարստութիւնը անոր կը պարտի եւ Ռուսերը չնորհակալ պէտք է ըլլան Մարաշխտին՝ եթէ վերջին պատերազմը չահեցան:

Չեմ գիտեր թէ արդեօք բոլոր վրացիներն ա՞յսպէս կը խորհին: Ութը ժամէն Թիֆլիզ հասանք. մութ էր եւ վրացի ժողովուրդը փողոցներու մէջ կը թափառէր առանց Ստալինի մասին մտածելու: Այդ գիւղեր պէտք էի քաղաքը անցընել ազգականներուս մօտ:

Անհրաժեշտ էր մինչեւ 22ի կէս գիւղերը ռուսական սահմաններէն դուրս ելլել: Ա-

առաջնության շատ կանուխ, դեռ մութ ու լոյս էր, Թիֆլիզի սաւառնակայան հասանք. 18 մղոն քաղաքէն հեռու: Բազմալեզու թիւն կար. չափեցին, կշռեցին պայուսակներս: Օտեսասայի դիմը 2 ժամ յապաղում ունի, ըսաւ վրացերէն, խօսնակը: Եւ սաւառնակներ կու գային ու կը մեկնէին դէպի Պաղու, դէպի Քաղան, դէպի Թուրքեստան. Թիֆլիզի կայարանը Կովկասի գլխաւոր կէտն էր բաժանման: Վերջապէս մենք ալ թռանք, եղբորս թողնէին մէկուն հետ, որ ինծի կ'ընկերէր: Անցանք Քուրթախի վրայէն. հով կար եւ օդին մէջ սաւառնակը կը տատանէր. սաւառնորդները ոռւս էին: Քուրթախի մէջ բազմաթիւ գործատուներ ծխաններով մեզի կը նայէին. ճարտարաբանութիւնը կը գրոնէ: Քուրթախի վրաստանի սիրտն է, թերեւս մայրաքաղաք ըլլար՝ եթէ Թիֆլիզ այդ տիտղոսը չյափշտակէր: Հեռուն Սեւ ծովը սկսաւ փայլիլ. եւ սաւառնակը իջաւ Սոխում, Ափխազներու անուանեալ մայրաքաղաքը, առանց Ափխազի:

— Օտեսասայի սաւառնակը երկու ժամ յապաղում ունի, յայտարարեց ոռւսերէն, խօսնակը:

— Տէ՛ր Աստուած, աս ի՞նչ ճակատագիր է, ըսի ես: Ալ չեմ հասնիր չոգենաւին, որ ժամը 3ին ճամբայ կ'ելլէ Օտեսասայէն:

Երբ կը շրջէի գեղեցիկ բնութիւնը դիտելու, յանկարծ մէկը հայերէն հարցուց.

— Դուք հայ էք:

— Այո՛, հայ եմ. ես Իտալիայէն եկած եմ ու կը վերադառնամ Վենետիկ:

— Ասում են թէ Իտալիա շատ գեղեցիկ է եւ Վենետիկը ջուրերու վրայ շինուած է:

— Այո՛, աշխարհիս ամէնէն գեղեցիկ քաղաքն է, ջուրերու վրայ շինուած հրաշք մը: Դո՛ւք ուրտեղացի էք, հարցուցի ես:

— Հէնձ Սոխումէն եմ, ասիկա իմ տիկինն է. ես սաւառնորդ եմ եւ արձակուրդի մէջ եմ:

— Ափխազներու մայրաքաղաքէն էք, ուրեմն: Ո՛րքան կը փափաքէի ափխազ մը տեսնել, ըսի ես:

— Ահա, հոն չորս հինգ հոգի նստեր են, սրանք Ափխազներ են:

Հետաքրքրութեամբ մօտեցայ անոնց. աղքատ խեղճ մարդիկ, լեցուն պարկերն իրենց առջեւ դրած կը խօսէին, անշուշտ սաւառնակի կը սպասէին: Մտիկ ըրի իրենց լեզուն. Թուրքերէն ըսեմ՝ Թուրքերէն չէր, վրացերէն ըսեմ՝ վրացերէն չէր. ի՞նչ լեզու էր, ես բան չհասկցայ:

— Ի՞նչ լեզու կը խօսին, հարցուցի երիտասարդին:

— Թուրքերէն, օսեղերէն, վրացերէն, ոռւսերէն լեզուներու խառնուրդ մը, պատասխանեց նա:

— Բայց շատ գեղեցիկ երկիր է. ի՞նչ հիանալի անտառներ ունի սա գիմացի լեռներուն վրայ:

— Ի՞նչ կը մշակեն:

— Ծխախոտ եւ լազուտ: Սեւ ծովի ամէնէն գեղեցիկ վայրերն ունի, ըսաւ երիտասարդը: Սոխումի շրջանին մէջ շատ հայեր կան, որոնք ծխախոտի մշակութեամբ կը զբաղին. նախկին Կարսեցիներ են: Յետոյ ցոյց տուաւ գիմացի բլուրները: Այդ բլուրներուն վրայ շատ հայ գիւղեր կան, կարծեմ շուրջ 60 հատ, անուանի է Թումանեան գիւղը: Աւետիս Իսահակեանը հոն այցելեր է եւ շատ սիրեր է. ազգասէր բնակիչներ ունի: Այդ բլուրներուն վրայ կը դառնուի նաեւ Պերիայի ծնած գիւղը: Երբ նա ողջ էր՝ գիւղը մեծ բախտ ունէր, կարապատ ճամբայ, ճամբուն եղերքը՝ վերելքին՝ պլտղատու ծառեր, որ գիւղացիները ուտելով հանգիստ գիւղ բարձրանան. բայց հիմա արժէք չունի. մօտակայ հայ գիւղացիները Պերիայի մահէն յետոյ ծառերը կտրեցին եւ Պերիայի գիւղացիները հայերու պէս բեռը շաղկապ քրտնելով վեր կը բարձրանան:

— Ուրեմն Պերիա Ափխազիոյ մէջ ծընած վրացի՞ է:

— Պերիա մինչեւ մահը վրացի էր, յետոյ ազգութիւնը փոխեց եւ հիմա Մինկերէի եղած է, բայց Մինկերէներն ալ զինքը չեն ընդունիր:

— Դուն Պերիան տեսե՞ր ես, հարցուցի ես:

— Այո՛, շատ անգամ, բայց միշտ հեռուէն:

— Ես ալ 1936ին տեսայ Թիֆլիզի մէջ, հայկական պարախումբի հանդէսին: Երբ թատրոն մտաւ, սարսափն ալ հետը մըտաւ:

Քիչ վերջ Երեւանէն հասաւ Մոսկուայի դիմը: Ճամբորդները Պրադիլիայի հայեր էին: Անոնք ալ մեկնեցան եւ մենք մնացինք. Օտեսասայի սաւառնակը անշարժ կեցած էր դաշտին մէջ:

Հարկ եղաւ երկար սպասել Սոխումի մէջ: Ռուսական սաւառնակները ճաշ չեն տար, այլ թեթեւ եւ բարակ չաքարեղէն մը (քարամէլ), որ բաւական կը դիմանայ ակռաներուն:

Կէս օր էր. մտանք կայարանի ճաշարանը: Մէկ կողմը գիւղ, լրագիրներ կը ծախէին, միւս կողմը ճաշարանի քանի մը սեղաններ. գլխարկով քանի մը մարդիկ, դէ՛ ճագուած, կը ճաշէին: Ճաշարանի տանիքին վրայ կը ծածանէր վրացական դրօշակը. կարմիր դաշտ մը, ցողունի մէկ անկիւնէն քանի մը կապոյտ երիզներ՝ ճաճանջի պէս կախուած, եւ մուրճ մանդաղ:

Միակ նշանը թէ աշտեղ վրացական հովանին կայ, բայց ոչ վրացի: Այդ երկրներուն մէջ անկախ հանրապետութիւն եղեր է կամ ինքնավար, նշանակութիւն չունի: Աւելի բան մը չեն քան Միացեալ Նահանգներու 49 աստղերը, կամ Զուլիցերիոյ 29 քանթոնները, Վաշինկթոնի կամ Պերնայի հանդէպ:

Մեր սեղանին մօտեցաւ օրիորդ մը եւ ոռւսերէն հարցուց.

— Ի՞նչ կը փափաքիք ուտել:

Ես երեսը նայեցայ չհասկցողի դիմքով:

— Ընկերը ոռւսերէն չի՞ գիտեր, հարցուց թոռնիկիս:

— Ո՛չ, օտար երկրէ եկած է, հայ է:

— Ես հայերէն մի քիչ գիտեմ, պատասխանեց աղջիկը:

— Ի՞նչ ազգ ես, հարցուցի ես:

— Մինկերէլ եմ պատասխանեց. լսե՞ր էք Մինկերէներու անունը:

— Այո՛, լսեմ եմ, Պերիան ալ մինկերէլ էր:

— Ո՛չ, նա վրացի էր, բողոքեց աղջիկը:

Վայ քեզ Պերիա, խորհեցայ ես, լաւ էր թէ ծնած չըլլայիր, քան թէ մարդիկ գերեզման մ'իսկ չուզէին տալ:

— Շատ լաւ, ըսի ես աղջկան: Ի՞նչ ունիք ուտելիք:

— Պորժ ունենք, ձու ունենք, խորոված, մալաքոյ եւ խարկած լազուտ:

— Խորոված չենք ուզեր, պատասխանեցի, դուք խորովածը ոսկրով միասին կ'այրէք եւ համով չէ. խարկած լազուտ ալ չենք ուզեր: Մեզի ձու, պորժ, խաշած գետնախնձոր եւ Կախեթի գինի բերէք:

— Կախեթի գինի չունենք. լաւ, սառն լիմոնշուր եւ կաղոզ ունենք:

— Ո՛չ. մեզի պաղ ջուր բերէք:

Ճաշերնիս համեստ անցաւ: Ես շուրջս կը դիտէի, ինծի համար տարբեր աշխարհ եւ տարբեր մարդիկ էին: Յաճախորդները կովկասցիներ էին, զանազան լեզուներ կը խօսէին: Զկայ երկիր մը այսքան աշխարհ ժողովուրդներու: Նոյնիսկ գիւղեր կան՝ հին ցեղերու մնացորդներ: Անոնք պորժը աղմուկով կ'ուտեն, եւ ուրիշներ լրագիր կը կարդային:

Օրիորդը միշտ մեր սեղանին շուրջը կը դառնար: Օտարական մը տեսած էր եւ իտալիայէն եկած. գիտէ՞ր արդեօք թէ իտալիան ուր է եւ ի՞նչ երկիր է: Հաշիւը բերաւ, 25 րուպլի եւ 50 կոպեկ:

Մեր սաւառնակը որ երկու ժամէն ճամբայ պէտք էր ելլել՝ եօթը ժամ յապաղում ունեցաւ: Շողենաւին չեմ հասնիր, խորհեցայ ես ցաւով: Ու կը մտածէի թէ ոռւսերը զիս ո՞ր բանտը պիտի դնէին, կամ ի՞նչ պիտի ընէին:

Դուրսը դաղջ օդ մը կար. արմաւենիները հաղիւ կը շարժէին եւ սաւառնակներ կու գային ու կը մեկնէին: Ժամը երեկոյեան հինգն էր:

— Օտեսաս մեկնողները թող սաւառնակ առնեն, ըսաւ խօսնակը:

Կտրեցինք Կովկասեան լեռներ, ահա Սոչին եւ յետոյ Քրազնոտար: Աստղալից զիշեր էր: Սեւ ծովը աստղերով լեցուն, լեռները մութ, գիւղեր, քաղաքներ լուսաւոր: Կտրեցինք Խրիմի թերակղզին, երբեմն ծով, երբեմն ցամաք, եւ կէս գիւղերին հասանք Օտեսաս: Կայարանը մայի էր, ոչ մէկ հաղորդակցութեան միջոց: Սաւառնակի պաշտօնեաներու հանրակառքով հասանք կեդրոն:

— Վա՛ր իջէք, ըսաւ քչոյդ. հասանք կեդրոն, ձեր տոմսակը տասը բուլլի է, հրամեցէք տալ:

— Մենք ինթուրիստ պիտի երթանք, ըսաւ թոռնիկս:

— Իմ գիծէս դուրս է, 15 բուլլի կ'ուզեմ, պատասխանեց շարժավարը:

Ինթուրիստի մէջ մարդ չկար. զիշերապահ ծերունի մը եւ բարապան մը արթուն էին:

— Տոմսակս, խնդրեմ, ըսի ես. արդէն հեռագրած եմ Թիֆլիզէն ինծի տոմսակ պատրաստել:

— Պաշտօնեան, ժամը հինգին դործը կը ձգէ, պատասխանեց նա: Պէտք է տունն երթալ եւ զինքն արթնցնել:

Դարձեալ ասդին անդին վաղեցինք՝ քաֆսի մը գտնելու. անոնք պետական պաշտօնեաներ են, աշխատանքի որոշ ժամ ունին: Բախտն օգնեց եւ գտանք թափառական ինքնաշարժ մը: Եկաւ պաշտօնեան, խեղճը կէս քունի մէջ էր:

— Ինչո՞ւ ուշացար, հարցուց ինձ:

— Սաւառնակը եօթը ժամ յապաղում ունեցաւ, պատասխանեցի ես:

Նայեցաւ անցադրիս եւ ինծի դառնալով ըսաւ.

— Դուք չէք կրնար մեկնիլ, ժամանակը երկու օր անցեր է:

Շինեց տոմսակս եւ մեկնեցանք նաւահանդիստ. ճիշտ կէս գիշեր էր:

— Դուք չէք կրնար մեկնիլ, կրկնեց դարձեալ, ձեր անցադիրը ինկած է. նայինք զինուորական ոստիկանութիւնը ինչ պիտի րսէ:

— Ես հոս մնալու փափաք չունիմ, պատասխանեցի թարգմանով. ձեր երկիրը

ըն մտնելը դժուար է, դուրս ելլե՞լն ալ դժուար է, հարցուցի ես:

Նաւահանդիստը շատ հեռու չէր: Ոստիկան սպան նայեցաւ անցադրիս եւ ռուսական աղուոր խառաշոյի հետ կնքեց անցադրիս ալ:

Այժմ կարգը մաքսատան էր:

— Այդ երիտասարդը ներս չի կրնար մտնել, խտալերէն լեզուով ըսաւ ինծի պաշտօնեան:

— Ինչո՞ւ, նա իմ թոռնիկս է, եւ մինչեւ չօգնաւ պիտի առաջնորդէ, պատասխանեցի:

— Ձեր երկիրներուն մէջն ալ նոյնը չէ՞, հարցուց պաշտօնեան:

— Ո՛չ, մեր երկիրներուն մէջ ազատօրէն շօգենաւ կարելի է բարձրանալ ճամբորդին հետ. հոն իրարու կենաց բան մ'ալ կը խմենք:

— Հոս աշղպէս չէ. այդ երիտասարդը չի կրնար այս դռնէն ներս մտնել, կըրկնեց պաշտօնեան:

Վերջին համբոյրը ամէնէն յուզումնալիցը կ'ըլլայ: Երիտասարդը մնաց դրան ետեւ:

Դարձեալ թուղթ մը ներկայացուցին. պէտք էր լեցնել եւ յայտարարել ունեցածը: Ռուսերը միշտ դրամ կը փնտռեն. կ'երեւի երկրին սեւ չուկայէն սարսափեր են:

— Ճերմակեղէն, հնութիւն մը եւ այսքան դրամ, պատասխանեցի ես:

Նայեցան Դուինի հին պնակին. կանոնաւոր թուղթ ունէի Հայաստանի կառավարութեան, հայերէն գրուած էր, սակայն վերտառութիւնը ռուսերէն էր, եւ բաւեց զիրենք համոզելու՝ թէ հրամանով կը տանէի:

— Ռուսական դրամ ունի՞ք, հարցուց խտալերէն խօսողը:

— Այո՛, պատասխանեցի, 50 բուլլի ունիմ, շօգենաւին վրայ պէտք կ'ըլլան:

— Աւելորդ տեղ կը տանիք, ըսաւ նա. շօգենաւին վրայ ռուսական դրամը չ'անցնիր. տոլարով պէտք է վճարէք:

— Իրաւունք ունին Եւրոպայի մէջ ձեր

դրամը չընդունելու, քանի որ դուք անոր արժէք չէք տար, պատասխանեցի:

Ռուս էր իմ պայուսակներուս նայողը. հազիւ աչք մը տուաւ եւ կոխեց պատուական խառաշոյ: Ես ամէն բանով կանոնաւոր էի:

— Ա՛յ, աս հայերը, աս հայերը, ըսաւ խտալերէն խօսողը:

— Ի՞նչ ունիք հայերու հետ, պատասխանեցի:

— Կու գան ասլանքներով ծանրաբեռն, կը մեկնին ասլանքներով ծանրաբեռն: Տես սա տիկինը, 12 ձեռք դանակ, դգալ եւ պատառաքաղ բերեր է Հայաստանէն եւ պայուսակներով իրեղէններ:

— Ինչո՞ւ կը դարմանաք. Հայաստան երթալ դալը ամէն օրուան դործ չէ. ազգականներ ունին, յիշատակներ կը տանին եւ յիշատակներ կը բերեն: Ո՞վ գիտէ, թերեւս ալ չտեսնէ իր սիրելիները եւ գէթ յիշատակներով միտիթարուի: Ինչո՞ւ կը կը դարմանաք, շատ մարդկային է:

Երիտասարդ եւ գէր տիկին մ'էր, կարծեմ Սիւրիայէն. նա Հայաստանի մէջ զաւակ մ'իսկ ունենալու բախտին արժանացած էր: Նորածինը, անդիտակից, մօր վրին փաթթուած՝ կը քնանար, եւ խեղճ կինը տազնապններով մէջ էր: Երեք ժամ քնած էին ասլանքները, ամէն բան մաքսատան նեղ յատակին փռուած, կարելի չէր օգնել, քննողը պէտք էր անդառնալի կերպով անդին անցնիլ. ոստիկանական շղթայ մը կար: Ձեմ գիտեր թէ ինչպէս իր բռնները կապկպեց: Բայց ինչքան դտայ շօգենաւին վրայ: Ոյժ չուէր խօսելու:

Ֆէլիքս ձերգիլնսիկ շօգենաւը մեզ արտասահման պիտի տանէր: Գիշերուան ժամը Յին վերցուց խալիսիները, ճռնէ չեցին մեքենաները: Ճամբորդները գրեթէ բոլորն ալ հայ էին. հոն էր այն մայրիկը՝ որուն ասլանքները Եալթայի առջեւ ափով երիտասարդ հայեր գողցան: Սիւնուշիկ երիտասարդ հայեր գողցան մեկրիացի միւս հայերը արդէն վաղուց մեկնած էին: Դարձեալ Քոստանցա եւ դարձեալ ոսկէաւազ ավերով՝ Վառնան: Վառնա պտրտելու համար հարկ էր մէկ տոլար

վճարել. միակ երկիրն է, որ ինքզինքը տոլարով ցոյց կու տայ:

— Ես Վենետիկ պիտի երթամ, ձեր քաղաքը տեսնելու համար մէկ տոլար չեմ տար:

— Ձե՞ս հաւնիր մեր Վառնային, հարցուց ինծի սպայ մը:

— Վենետիկ աւելի գեղեցիկ է:

— Իրաւունք ունիս, պատասխանեց, ես Վենետիկը տեսեր եմ, հիանալի քաղաք է:

Խեղճ Պուլլարներ, իրենք ալ տոլարի ցաւ կը քաշեն. արտասահմանի հետ առուտուրը լոկ տոլարով կ'ըլլայ, Սովետներու հետ առուտուրը շատ անգամ առիւծի բաժին կ'ըլլայ:

Մէկ օր յետոյ ձերգիլնսիկն մտաւ Վոսփոյ. առաւօտ կանուխ է: Ոչ մէկ մաքսային դործողութիւն. անցորդ էի:

Պոլիս դրազած էր Մենտերէսի դատով: Ընթրիքի պահուն՝ Կիւրսէյն ու յետին թուրքը ձայնափութին զիմացն էին:

— Կախենք՝ թէ չկախենք:

Մենտերէս Պոլսոյ մէջ հիանալի ճամբաներ բացեր է, դրամ կերեր է, Արեւելեան գաւառները Մոսկովին կ'ուզէ եղեր ծախել:

— Կախենք՝ թէ չկախենք:

Հարկ եղաւ երկու շաբաթ յետոյ խոյս տալ պոլսահայերու հիւրասիրութեան: Իտալական Սան Ճորճոյ շօգենաւով պէտք էի Վենետիկ մեկնիլ: Թուրքերը իրենք ալ չեն սիրեր իրենց դրամը, պէտք է տոլար վճարել:

Շօգենաւը ճամբայ ելաւ բնութեամբ հիանալի եւ իր աղտոտ փողոցներով նըշանաւոր քաղաքէն: Երկրորդ օրը հասանք Իզմիր:

Կեսաւուր Իզմիրը հիմա եղած է միւսլիմաւոր Իզմիր, իր աղտոտ, ցեխոտ փողոցներով, աղքատ խանութներով, բազում բռնակիրներով, չըջուն ստահակներով եւ կասկածոտ աչքերով:

Շօգենաւը կազմակերպեց այցելութիւն մը գէպի Եփեսոսի աւերակները: Կային Փրանսայիներ, հոլանտացիներ եւ անգլիացիներ: Մեր առաջնորդն էր թուրք ե-

ընտանացի մը, որ ամէն լեզու կը խօսէր եւ ոչ մէկ լեզու գիտէր: Անցանք բամպակի հիւանդ արտերէն:

— Տեսէ՞ք, հիւանալի մշակութիւն է, ըսաւ առաջնորդը:

Ճամբան ուղտերու ծոյլ կարաւաններ կ'անցնէին: Ֆրանսացի տիկին մը կանգնեցուց կարաւան մը եւ բարձրանալով ուղտի մը քամակը լուսանկար քաշուեցաւ:

— Ֆրանսայի մէջ կրնան նոր տարիի քարտ տպել եւ ծախել, նորութիւն է:

Ահա Սելմիւր գիւղականը, ուր հասեր են ժամանակին թափառական ցեղեր եւ իրենց անունով մկրտեր: Գիւղին վերեւ բլրան մը վրայ կար աւերակ եկեղեցի մը: Աւերակներէն կը տեսնուէր թէ ժամանակին եղած է հրաշալիք մը: Ս. Յովհաննէս Աւետարանիչի եկեղեցին էր եւ կ'ըսեն թէ իր նշխարներն ալ աւադ խորանի տակ թաղուած են:

— Ասիկա Յովհաննէս Մկրտիչի եկեղեցին է, ըսաւ առաջնորդը մեծ գիտութեամբ:

— Բայց Յովհաննէս Մկրտիչը Պաղեստինի մէջ գլխաւորուած է, հոս չէ եկած, ըսի ես, Յովհաննէս Աւետարանիչը պէտք է ըլլայ:

— Դուն փրօֆեսսոր ես, հարցուց ինծի:

— Է՛հ, քիչ մը կը հասկնամ այս բաներէն, պատասխանեցի:

Սելմիւր գիւղին մէջ հասարակ ծածքի մը տակ հաւաքած էին յունա-հռոմէական թանկագին արձաններ եւ հնութիւններ:

— Ինչո՞ւ գեղեցիկ թանկարան մը չէք չինած, հարցուցի տնօրէնին՝ իմ կոտրած թուրքերէնովս:

— Պիր կիւն եպիսկոպոս, (օր մը կը շինենք) պատասխանեց անտարբեր չեչոով:

— Մե՛ղք, ըսի ինքնիրենս, հազա՛ր մեղք, ի՞նչ հանձարներ ստեղծեր են այս գեղեցիկութիւնները եւ հիմա կը մնան այդպէս անխնամ:

Հանրակառքն առաջ երթալով մտանք փոքրիկ անտառ մը, բլրան մը վրան էր. հոն՝ ըստ աւանդութեան՝ կը գտնուէր

Տիրամօր տունը, երբ խաչելութենէն յետոյ Յովհաննէս աւետարանիչին մօտ ապաստանեցաւ: Փոքրիկ աղիւսակերտ տընակ մ'էր, ծառերով պսակուած. ոչ մէկ ապացոյց կար Աստուածամօր տունն ըլլալու. սակայն աւանդութիւն էր եւ աւանդութիւնը սիրելի ու յարգելի է:

Իջանք բլուրէն վար. ահա մեր ոտքերուն տակ աւերակ Եփեսոսը, ոչ խոր՝ բայց նեղ հովիտի մը մէջ երկարած: Հիւանալի էին իր աւերակները, բայց շատ տանջուած: Հոն կարելի էր տեսնել յունական եւ հռոմէական արուեստները իրարու խառնուած, զարդարեր էին այդ նահանգային քաղաքը: Պատմական խոշոր նշանակութիւն ունեցեր է: Հեթանոս արուեստին վրայ քրիստոնէութիւնը դրած է իր լոյսը, Պօղոս առաքեալ սիրեր է այդ քաղաքը եւ տիեզերական ժողովքը անմահացուցեր է դայն:

Քաղաքէն քիչ հեռու բերդ մը կար. առաջնորդը շատ ապահով ըսաւ.

— Այս բերդին մէջ Պօղոս առաքեալը կախեր են:

Իր գիտութիւնը հաստատելու համար՝ երեք կոտորած լեզուներով կրկնեց նոյն բանը: Անշուշտ խնդուք մը փրթաւ:

— Փրօֆեսսոր, այդպէս չէ՞, հարցուց ինծի:

— Ո՛չ, Պօղոս առաքեալը Հռոմի մէջ սուրով սպաննեցին, պատասխանեցի ես:

Այնուհետեւ նա ամէն բան ինծի կը հարցնէր՝ սխալներ չընելու համար:

Աւերակները տակաւին բոլորովին չեն պեղած. ով գիտէ թէ մօտակայ բլուրները, հովիտները դեռ ինչ գանձեր կը ծածկեն: Ամէն քարի վրայ, սիւներու եւ կամարներու վրայ յունարէն եւ լատիներէն արձանագրութիւններ կային: Անուններ կայսրներու, նահանգապետներու, ազնւականներու. այժմ մենք կը կարգանք եւ կ'անցնինք մոռնալով այդ անունները, հիւանալով իրենց դործերուն վրայ:

Կէս օրուան ճաշը Եփեսոսի մօտ բրինձ, փոքրիկ ճաշարանի մը մէջ: Շողենաւը մեր ճաշը զրկած էր հետերնիս, թուղթէ տոպրակներով. ապուխտ, երչիկ: Թուրք

առաջնորդը իմ սեղանիս վրայ նստեցաւ. օտար փրօֆեսսորի մը հետ պիտի ճաշէր, ստէպ չի հանդիպիր:

— Հրամայե՛ք այս ապուխտէն, ըսի ես, իտալական է, շատ լաւ կը շինեն:

— Շնորհակալ եմ, պատասխանեց, ես ուղղափառ միւսլիման եմ, թէպէտ Կովկզին ծնած եմ, բայց իմ կրօնքս կը պահեմ, խոզի միս չեմ ուտեր:

— Գէթ դաւաթ մը դինի առէ՛ք, կրկնեցի ես:

— Ո՛չ, դինին ալ արդիւրած է Բէրդամպէրը (մարդաբէն, Մահմէտ). սատանայի քով կ'երթան այն միւսլիմանները որ երչիկ կ'ուտեն եւ դինի կը խմեն, պատասխանեց ինծի:

— Այն ատեն, ըսի, ջուր խմէ եւ պանիր կեր, եւ պաղ ջուրի չիշը առջեւ դրի: Չեմ ուզեր որ դուն զրկուիս Մահմէտի արքայութենէդ:

Երեկոյեան մօտ վերադարձանք շողենաւ: Իզմիր քարափ չունի, մակոյկներով թուղ եւ չամիչ կը բառնային Աստուծոյ համար:

Իտալական շողենաւին վրայ երկու թուրք ոստիկաններ կային: Մօտեցայ իրենց եւ հարցուցի:

— Ո՞րքան բնակիչ ունի Իզմիրը:

— Մէկ միլիոն, պատասխանեց մին:

— Կարծեմ շատ է, ըսի ես:

— Կէս միլիոն ապահովապէս, պատասխանեց միւսը:

— Ես թուրքիոյ պատմութիւնը լաւ գիտեմ, ըսի. այս քաղաքը Կեաւուր Իզմիր կը կոչուէր, եւ բնակիչները հայեր եւ յոյներ էին, հիմա ինչո՞ւ չկան:

— Դուք պատմութեան փրօֆեսսոր էք, հարցուցին միարեան:

— Այո՛, պատմութեան փրօֆեսսոր եմ, պատասխանեցի:

Երկուքն ալ պաշտպանութեան զէրք ունեցին:

— Պարոն, ըսին վայրագ չեչոով, թուրքիան թուրքերուն կը պատկանի, երկու լազկերն ալ քէջիքը դուրս. անոնք մեր հաւատքին եւ ազգին թշնամի էին:

Շողենաւը բարձրացուց իր խարիսխը եւ հեռացաւ դէպի բացը: Իզմիրի շրջակայ բլուրները, քաղաքը դոյնդոյն լոյսերով ծաղկած էին. հիւանալի էր իր ծովախորշը:

Խեղճ Զմիւռնիա. քանի փառքեր տեսած էր հին ժամանակները, եւ քանի սուրբեր ու հանձարներ դեռ իր անունը կը կրեն եւ նա հիմա, քսաներորդ դարուն մէջ, լոկ բեռնակիրներ, ստահակներ եւ ցեխոտ փողոցներ ունի:

Կեաւուր Իզմիրն ալ մթութեան մէջ կորսուեցաւ եւ շողենաւը մտաւ Յոնիական ծովը՝ Աթէնք ու Վենետիկ երթալու համար:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Ես ուզեցի նկարագրել իմ Հայաստան ճամբորդութիւնս ա՛յնպէս՝ ինչպէս աչքերս տեսան եւ սիրտս զգաց: Հայրենիքին վատ ծառայութիւն կ'ընեն անոնք որ ամէն բան ձեռմով կը տեսնեն, եւ անոնք որ ամէն բան սեւ կը տեսնեն: Հայաստան նման է աշխարհիս միւս երկիրներուն. մարդիկը նոյնն են՝ իրենց զգացումներով, տենչերով եւ երազներով. ոչ սուրացող հովեր են եւ ոչ անշարժ քարեր, այլ մարդիկ՝ որ տենդալին կ'աշխատին ի սէր իրենց ընտանիքին եւ հայրենիքին:

Իրենց ներքին եւ արտաքին քաղաքակառուցութիւնը կապուած է Մոսկուայի, տէր չեն իրենց ճակատագրին. Հայաստան փոքրիկ մասնիկ մ'է անասման Ռուսիոյ. թերեւս հաւատան կամ հաւատան համայնավարութեան յաղթանակին, սակայն բոլորը մէկ նպատակ ունին՝ ապրիլ երջանիկ:

Պէտք չէ բաղդատել Հայաստանը եւրոպայի հարուստ եւ յառաջադէմ երկիրներուն հետ. երէկ քարուքանդ էր, այսօր բան մը չինուած է, եղած է ազգ մը, ցեղային ամբողջութիւն մը՝ մեր անցեալ անանուն վիճակին փոխարէն:

Հարուստ չէ Հայաստանը եւ շատ համեստ իր առօրեայ կեանքին մէջ, համեստ հազուադէպով, ուտելիքով եւ բնակարա-



նով: Յոյսեր ունին ապագային աւելի երջանիկ ապրիլ. չեմ գիտեր թէ այդ յոյսը պիտի արդարացնէ՞ իրենց երազները. բայց տեսայ որ չարաչար կ'աշխատին ամէն մարդի մէջ, եւ աշխատող ազգը անպայման լաւ ապագայ կ'ունենայ:

Մեր ըմբռնած ձեւով աղատութիւն չըկայ հոն: Ամբողջ սովետական աշխարհը կարելի է գիշերօթիկ վարժարանի մը նըմանցնել՝ ուր կը տիրէ պետական խիստ հսկողութիւն: Հայերուս համար այնքան ալ խոտելի չէ, զէթ քիչ մը պետականութիւն եւ կարգապահութիւն կը սորվինք. միշտ եղած ենք անտէր, անիշխանական:

Հայաստանի վարիչներն ու ժողովուրդը

յանցաւոր չեն՝ եթէ ծանր խոչընդոտներ կան երթալու հոն, աղատօրէն չըջելու, ծախսելու իր դրամը ուղած ձեւով եւ ուղած տեղը, եւ վերադառնալու փափաքած ժամանակը. դժուարութիւնը նոյնն է բովանդակ Ռուսիոյ համար:

Իր հոգերով, պակասութիւններով, առաւելութիւններով, փոքրիկ երկիր մը կայ Արարատի հովանիին տակ, արտոյտի բոյն մը՝ որ մեր արիւնով, մեր պատմութեամբ եւ տենչերով Հայաստան կը կոչուի. աշխարհիս բոլոր հայերուն սիրելի հայրենիքն է:

1 Սեպտեմբեր, 1961

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը, տարեկան 1.000 տոլարի նուիրատուութեամբ, երեք տարուան համար (1962-1964), ազնուօրէն կ'օժանդակէ «Բագմավէպ»ի հրատարակութեան:

«Բագմավէպ»ի խմբագրութիւնը կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնը:

La Fondation Calouste Gulbenkian, avec une subvention de 1.000 dollars par an, pour trois ans (1962-1964), contribue à la publication de la Revue PAZMAVEB.

La Rédaction de la Revue **Pazmaveb** exprime ses remerciements sincers.

Կ Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ն

Dr. B. MISSAKIAN

Au jardin des Muses

Anthologie des poètes arméniens
VAROUJAN - SIAMANTO - TEKEYAN
V. DERIAN - B. TOURIAN
GR. de NAREK

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ

Տարուսի Առիւծը
Թատրերգութիւն երեք արարով

Դէպի Աւարայր
Թատրերգութիւն չորս արարով
Ինչպէս տեսայ Հայաստանը

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

ԿԵԶԱ ԿԱՐՏՈՆԻԻ

Է Կ Ե Ր Ի Ա Ս Տ Ղ Ե Ր Ը
Վէպ հունգարական կեանքի
Թրգմն. հունգար բնագրէն

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

La Poesia Armena Moderna

Antologia
Trad. in italiano

